№ 219 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 1 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1914

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 1 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 219

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 3 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Թելաւի ս. Գէորգ աւագ եկեղեցու համար հարկաւոր է աջող ձայնով

ՄԻ ՏԻՐԱՑՈՒ,

որին կը տրվի ամսական ռոճիկ 15 րուբլի, գանձանակ, ծխերից արդիւնք, իսկ նոյն եկեղեցու գաւթում մի սենեակ: Ցանկացողները թող դիմեն հետևեալ հասցէով. Телавъ, Ктитору церкви имени св. Георгія Г. Б. Татузову. տռ. 909. 3—1

ԲԺՇԿԱՊԵՏ

Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ

նախկին օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասսիստենտ Բեռլինի համալսարանի պրոֆ. Պոզների:

Ընդունում է հիւանդներին միզասեռական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւններով՝ առ. ժ. 10—12, երեկ. ժ. 4—6: Սոլոլակ, Բարիատինսկայա փող. սեփ. տուն, № 1, հրդեհաշէջների բնակատեղիի դիմացը, տելեֆօն 10—58.
(չ. ու. կ.) տռ. 875. 50—8

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. Յ. ԳԱՐԱԿԻՒԼԵԱՆ

վերադառնալով արտասահմանից վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը՝ առ. ժամը 9—2 և երեկ. ժ. 5—7:
Վելիամինովսկայա փող. № 4.
(ա. օ.) տռ. 871. 0—12

ԻՆՉ ՊԷՏՔ Է ԽՆԴՐԵՆՔ

I

Թէ ներկայ համաեւրոպական պատերազմը այն պատմական ահագին նշանակութիւնը պէտք է ունենայ, որ դարերից ի վեր անլուծելի մնացած կնճռոտ խնդիրները պէտք է գտնեն իրանց վերջնական լուծումը, դրա մասին ոչ մի կասկած չը կայ:

Այդ կնճռոտ խնդիրների շարքում իր վերջնական լուծումը պէտք է ստանայ և հայկական հարցը, որի սկիզբը դրվեց Իսրայէլ Օրիի պատմական միսիայով:

Ներկայ պատերազմի աւարտվելուց յետոյ, անշուշտ, պէտք է գումարվի համաեւրոպական կոնֆերենցիա կամ կոնգրէս, որը պէտք է քննութեան առնէ բոլոր հրատապ հարցերը և տայ իր վերջնական որոշումը: Եւ, անկասկած, լինի պատերազմ Թիւրքիայի հետ թէ ոչ, Ռուսաստանը այդ կոնգրէսի քննութեանն է ենթարկելու և հայկական հարցը ու պահանջելու նրա վերջնական լուծումը:

Ռուսաստանն է եղել հայկական հարցի գլխաւոր հեղինակը Սան-Ստեֆանոյի դաշնագրի մէջ մտցրած իր 16-րդ յօդուածով, Ռուսաստանն է եղել նոյնպէս հայկական ռէֆօրմների վերջին ծրագրի նախաձեռնողը և վերջապէս Ռուսաստանն է, որի քաղաքական և տնտեսական շահերը հրամայողաբար պահանջում են հայկական հարցի կարգաւորումը և վերջնական լուծումը:

Եւ այդ հիման վրա Ռուսաստանին է պատկանում իրաւունքը և նախաձեռնութիւնը դնելու ապագայ համաեւրոպական կոնգրէսի քննութեան՝ հայկական հարցը և պահանջելու նրա լուծումը:

Մամուլի մէջ առաջինը Տէրվանդագէն եղաւ, որ «Մշակի» մէջ տպած իր յօդուածով յայտնեց, թէ մենք պէտք է բաց-համարձակ ասենք մեր ասելիքը և յայտնենք, որ մենք խնդրում ենք Թիւրքահայաստանի համար աւտօնօմիա:

Այո, հայ ազգը պէտք է բոլորովին անկեղծօրէն արտայայտէ իր ցանկութիւնները և իղձերը: Այլ բան է՝ իրագործելի կը լինեն այդ իղձերը, կընդունվեն նրանք կոնգրէսից թէ ոչ. բայց օգնութիւն աղաղակողն ամենից առաջ ինքը պէտք է յայտնէ, թէ ինչ տեսակ օգնութիւն է խնդրում:

Այսօր ոչ մի տարակոյս չը կայ ոչ միայն մեզ հայերիս համար, այլ և եւրոպական պետութիւնների և ազգերի համար, որ Թիւրքիան, շնորհիւ Թիւրք իսլամ տարրի առանձնայատկութիւնների՝ անկարող է դառնալ կուլտուրական և բարեկարգ պետութիւն. նա դատապարտված է քայքայվելու, նրան կազմող ազգերը պէտք է կազմակերպվեն ինքնուրոյնաբար և ապրեն իրանց ազգային կեանքով: Անա այդ ազգերի մէջ հայ ազգն էլ, իր անցեալով, իր պատմութեամբ, իր քաղաքակրթական յատկութիւններով արժանի է ապրել իր ինքնուրոյն կեանքով:

Որպէսզի որևէ թիւրիմացութեան առիթ չը տանք, որպէսզի որևէ իլլիւզիա չը ստեղծենք մեզ համար, մենք պարտք ենք համարում յայտնել, որ հայկական հարցի և հայ ազգի պահանջի գլխաւոր էութիւնը 1878 թւից, այսինքն Բերլինի կոնգրէսից ի վեր միշտ կայացել է նրա մէջ, որ Թիւրքիայում ապրող հայ ազգաբնակութեան համար ստեղծվի ապահովութիւն և հնարաւորութիւն ապրելու այնպէս, ինչպէս ապրում են նրա եղբայրակիցները Ռուսաստանում, այն է՝ ունենալ կեանքի, գոյքի, պատուի ապահովութիւն, կուլտուրական խաղաղ զարգացման երաշխիք: Այս է եղել ամենաառաջին և կենսական պահանջը: Եւ եթէ թիւրքական կառավարութիւնը երբևիցէ կարողացած լինէր իրագործել այս տարրական պահանջը, հայ ժողովրդի մէջ բնաւ հարց չէր ծագի ազատվելու թիւրքական իշխանութիւնից: Բայց որովհետև Թիւրքիան անկարող եղաւ իրագործել մարդկային գոյութեան այդ տարրական պահանջը, հայ ժողովուրդը եկաւ այն անխուսափելի եզրակացութեան, թէ Թիւրքահայաստանի աշխարհագրական դիրքի պատճառով, ինչպէս և պատմական պատճառներով, միակ պետութիւնը, որ կոչված է իրագործելու թիւրքահայ ազգաբնակութեան այդ մարդկային տարրական պահանջը, դա Ռուսաստանն է, ուստի և նա շատ բնական գտաւ, որ Ռուսաստանը գրաւէ և միացնէ իր տիրապետութիւններին և Թիւրքահայաստանը: Եւ եթէ 1878 թ. Ռուսաստանը գրաւած լինէր Թիւրքահայաստանը ու միացրած Ռուսական Հայաստանին, այլ ևս հայկական անունով հարց գոյութիւն չէր ունենայ: Աւելին ասենք, եթէ եւրոպական մեծ պետութիւնները համաձայնած լինէին մինչև այժմ մանդատ տալ Ռուսաստանին՝ գրաւել Թիւրքահայաստանը այնպէս, ինչպէս Աւստրիային տուին գրաւել Բոսնիան և Հերցեգովինան, այդ դէպքն էլ հայութիւնը մեծ համակրանքով կողջունէր և դրանով էլ հայկական հարցը լուծված կը համարվէր ընդմիշտ: Եւ եթէ այսօր էլ, Թիւրքիայի հետ պատերազմ ծագելու դէպքում, Ռուսաստանը գրաւէ Թիւրքահայաստանը և միացնէ Ռուսական Հայաստանին, հայ ժողովուրդը դարձեալ մեծ համակրութեամբ կողջունէ այդ դէպքը և դրանով լուծված կը համարվի հայկական հարցը:

Սակայն, եթէ այսօր խօսք է լինում Թիւրքահայաստանի ինքնավարութեան, աւտօնօմիայի կամ հայկական մի անկախ և կամ վասսալ իշխանապետութիւն ստեղծելու մասին, այդ վերաբերում է այն դէպքերին, երբ Ռուսաստանը չը կամենայ կցել Թիւրքահայաստանը իր պետութեան հետ և քաղաքական պայմանները պահանջեն տալ Թիւրքահայաստանին մի այլ կազմակերպութիւն կամ թողնեն Թիւրքիայի տիրապետութեան ներքոյ՝ միայն սահմանափակելով թիւրքական իշխանութեան իրաւունքները:

Անա այդպիսի դէպքում հարց է ծագում, թէ կառավարութեան ո՞ր ձևն է աւելի ցանկալի Թիւրքահայաստանի համար և ինչ պէտք է խնդրենք մենք հայերս:

Այդ տեսակէտից և կը քննենք խնդիրը:

Հ. Առաքելեան

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
30 սեպտեմբերի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.— Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից. «Սեպտ. 28-ին Վիսլայի ձախ ափին, դէպի Իվանգորոդ և Վարշավա տանող ճանապարհին սկսվեց կռիւ: Մնացած զօրաճակատում դրութիւնը անփոփոխ է: Մեր հեծելվաշտերը անցնելով Կարպատները մի քանի կէտում՝ ներս խուժեցին ունգարական հարթավայրը»:

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
29—30 սեպտեմբերի

ՓԱՐԻԶ.—Օտարազգի լեգիօնի շարքերում մտնող կամաւոր իտալացիների թիւը օրէցօր աւելանում է. նրանցից կազմվել են նոր օժանդակ զօրախմբեր:

Սեպտ. 28-ի առաւօտը Փարիզի վրա նետված ռումբերից սպանվեցին 4, վիրաւորվեցին 20 հոգի: Աէրօպլանը նետեց նաև մի դրօշակ և մի տոպրակ մակագրութեամբ՝ «Մենք վերցրինք Անտվերպէնը, շուտով հերթը ձեզ էլ կը հասնէ»:

«Ֆիգարօյի» ասելով, Փարիզի Աստուածամօր տաճարին պատճառված վնասվածքները՝ ռումբից՝ չափազանց լուրջ են:

Պաշտօնական հաղորդագրութիւն: Ձախ զօրաճակատում մեր հեծելազօրը շարունակում է զարգացնել գործողութիւնները Լա-Բասսէ, Լանսէ, Ազբրուկ շրջանում: Արրասի և Ուազի միջև վանվեցին թշնամու յարձակումները: Կենտրոնում ֆրանսիացիք մասամբ առաջացել են էն գետի աջ ափով, Սուասոնից ներքև: Վերդէնից դէպի արևելք և հարաւ-արևելք ֆրանսիացիք վանեցին գիշերով Բանդէսապտի վրա գործած յարձակումը՝ Սէն-Միէլից դէպի հիւսիս: Մեր վերցրած դրօշակը պատկանում է Պոմէրանի 6-րդ գնդին, որ մտնում է պրուսական երկրորդ զօրաբանակի մէջ: Ծովային հրացանաձիգ զօրամասը, սեպտ. 26-ի ամբողջ օրը կռւելով, սեպտ. 27-ի գիշերը ետ մղեց գերմանացիներին, պատճառելով նրանց լուրջ վնաս: Գերմանացիք կորցրին 200 սպանված և 50 գերի, ֆրանսիացիք՝ 9 սպանված և 39 վիրաւոր:

ՓԱՐԻԶ.— Պաշտօնական հաղորդագրութիւն: «Դրութիւնը մնում է նախկինը: Լասսինիում մենք ձեռք ձգեցինք գերմանական մի դրօշակ: Ընդհանուր առմամբ օրվայ մէջ տեղի ունեցած գործողութիւնները նպաստաւոր էին»:

Սկզբում յայտնած այն տեղեկութիւնը՝ թէ գերմանական աէրօպլանից ռումբ նետվեց Աստուածամօր տաճարի վրա, ճիշդ չէ. իրողութիւնն այն է, որ ռումբը պայթեց նրանից ոչ հեռու, այրվեց ներքին շինութեան գերաններից մէկը: Այդպիսով ռումբը նետվել էր հրդեհ առաջացնելու համար:

ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
29—30 սեպտեմբերի

ՑԵՏԻՆԻԷ.—Սեպտ. 27-ին աւստրիական մի զօրամաս յարձակում գործեց սերբ-չերնօգորական զօրքերի վրա Ռոմանի մօտ Բոսնիայում, բայց ետ մղվեց: Չերնօգորցիք փոխ-յարձակման դիմեցին և թշնամուն անկարգ փախուստի դարձրին: Հետապնդումը շարունակվեց 4 ժամ: Թշնամին ունեցաւ խոշոր կորուստներ: Դաշնակիցների կորուստներն աննշան են:

ՑԵՏԻՆԻԷ.—Սարաեւոյի և Ռոմանիի մօտ կռիւը տևեց սեպտ. 26-ին և 27-ին: Չերնօգորցիք վերցրին մի քանի հարիւր գերիների, ձեռք ձգեցին մի քանի գնդակացիր, թնդանօթներ և շատ ռազմամթերք: Սերբերը եռանդուն աջակցութիւն են ցոյց տալիս չերնօգորցիներին և խիզախ մասնակցութիւն են երևան հանում այդ գործում: Այս յաղթութիւնը Կալինովիկայի մօտ տարած յաղթութեան հետ բաւականին դիւրացնում է չերնօգորցի զօրքի գործողութիւնները Սարաեւոյի դէմ և Հերցեգովինայում:

ՆԻՇ.—Սերբերը սեպտ. 26-ին աջողութեամբ կռիւ մղեցին Բոսնիայում և ձեռք ձգեցին մի քանի գնդակացիր: Սեպտ. 26-ին թշնամին թոյլ կրակ բացեց Բելգրադի բերդի և Դունայի գետափի վրա: Սեպտ. 27-ին Զվօրնիկ-Լօզնիցա զօրաճակատում տեղի ունեցան մի քանի աննշան ընդհարումներ, որոնք նպաստաւոր էին սերբերի համար: Մնացածում առանձին նորութիւն չը կայ:

ԲԵԼԳՐԱԴ.—Վաղ առաւօտ, երէկ, թշնամին անհամեմատ խոշոր ուժերով Բատայնիցայի մօտից շարժվեց սերբիական դիրքերի դէմ: Սավայի ձախ ափին սերբիական առաջաւոր զօրքերը, պաշտպանութեամբ արտիլլերիայի շեշտակի կրակի, 3-ժամեայ կռւից յետոյ վանեցին թշնամու զօրամասին նրա դիրքերից շատ հեռու: Բէշանիի մօտ նահանջելիս թշնամին խոշոր կորուստ կրեց: Սերբ զօրքերը պահեցին իրանց դիրքերը Սավայի ձախ ափում:

ՊԱՏԵՐԱԶՄ ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ)
30 սեպտեմբերի

ՏՕԿԻՕ.—Ճապօնացիք երևան հանեցին, որ Ցինդաօյում գերմանացիք գործ են ածում «դում-դում» գնդակներ:

Կառուցանվող երեք գեր-դրեդնօուտները կոչվելու են «Եամէշիրօ», «Իսէ» և «Նիւտա»:

ՏՕԿԻՕ.—Շանդունի երկաթուղագծում ճապօնացիք ձեռք ձգեցին 37 շոգեմեքենայ և 972 վագօն:

Ցինդաօյի մօտ տեղի ունեցան մանր ընդհարումներ:

ՉԻՖՈՒ.—Գրաւելով ամբողջ Շանդունի երկաթուղագիծը, ճապօնացիք այժմ անարգել կը պաշարեն Ցինդաօն չորս կողմից:

Ճապօնացիք պահանջեցին հանել բոլոր չը կռւողներին:

ԾՈՎԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
30 սեպտեմբերի

ՉԻՖՈՒ.—Անգլօ-ճապօնական ռազմանաւերը ռմբակոծեցին Իլտիս բերդերը. այրվեցին Իլտիսից դէպի հիւսիս գտնվող զօրանոցները և փչացաւ ջրամբարը: Գերմանացիք շարունակ ռմբակոծում են անգլօ-ճապօնական ռազմանաւերը և դիրքերը:

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Պաշտօնական: Ծովային գեներալ-շտաբը հաղորդում է, որ սեպտ. 27-ին Բալտիկ ծովում նկատվեցին թշնամու ստորջրեայ ռազմանաւեր: Առաւօտը այդ ռազմանաւերը թնդանօթներ պարպեցին «Ադմիրալ Մակարօվ» յածանաւի վրա, որ կանգ էր առել դիտելու նիդէրլանդական դրօշակով գնացող ինչ-որ կասկածելի առագաստանաւ: Ստորջրեայ ռազմանաւերը մի քանի ականներ նետեցին յածանաւի կողմը, որոնք, բարեբաղդաբար, անցան կողքով, ոչ մի վնաս չը պատճառելով «Ադմիրալ Մակարօվին»:

Սեպտ. 28-ին, ցեր. ժամը 2-ին, թշնամու ստորջրեայ նաւերը նորից ռմբակոծեցին «Բայեան» և «Պալլադա» յածանաւերը, որոնք գտնվում էին Բալտիկ ծովում: Չը նայած որ յածանաւերը իր ժամանակին պարպեցին ուժեղ կրակ, սակայն թշնամու ռազմանաւերից մինին աջողվեց ականներ նետել «Պալլադայի» կողմը, որի վրա առաջացաւ պայթում և յածանաւը շեշտակի կերպով ջրասուզվեց իր ամբողջ մարդկանց հետ:

ԼՕՆԴՕՆ.—Պ. Հ. Գ. թղթակիցը տեղեկութիւն ստացաւ Լօնդօնի ռուսաց գեներալ-հիւպատոսից, թէ ականից ջրասուզված «Ռունօ» շոգենաւում կային 185 ռուս ճանապարհորդ, որոնցից 38-ը խեղդվել են և մէկը մեռել է ջրից հանվելուց յետոյ:

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
29—30 սեպտեմբերի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Գերմանական զօրքի օֆիցերական կազմի մէջ խոշոր կորուստները ստիպեցին կառավարութեանը հրաման արձակել այն մասին, որ պարտաւորապէս ներկայանալու են երբևէ ծառայած բոլոր օֆիցերները և ունտեր-օֆիցերները, չը նայած հասակներին: Պաշտօնաթող գեներալները ստանում են պահեստի ալանդվէր զօրաբանակներում բարձր պաշտօններ: Զինւորներ շարունակ ընդունվում են զօրքի կազմը լրացնելու համար: Ժողովրդական ուսուցիչները, որոնք ժամանակաւորապէս ազատված էին գործող բանակում ծառայութեան կոչվելուց, այժմ արդէն կանչված են: Առայժմ սովը Գերմանիային չէ սպառնում, ինչպէս գրում են գերմանական լրագիրները: Գլխաւոր վտանգը կայանում է հում նիւթի պակասութեան մէջ: Գերմանիան մեծ կարիք ունի նաւթի, բամբակի, պղնձի, ցինկի: Տնտեսական ճգնաժամը կարող է աւելի վտանգաւոր հետևանքներ ունենալ, քան թէ զօրքի պարտութիւնը: Մետաղաձուլական արդիւնաբերութիւնը նոյնպէս մեծ դժուարութիւններ է կրում, թէև այժմ պատերազմական կարիքների համար բաւականանում են գերմանական հանքերում պատրաստվող մետաղի պաշարները:

Աւստրիայի ներքին կացութիւնը վերին աստիճանի երկիւղալի է. սպասվում է ապստամբութիւն կամ յեղափոխութիւն մի քանի ժողովուրդների մէջ: Կառավարութիւնը գործադրում է խիստ միջոցներ, ահաբեկելով ազգաբնակութիւնը: Աւստրիայում կենսական մթերքների գները սաստիկ բարձրացել են. օրինակ հացի ֆունտը մեր փողով 16 կոպէկ է: Իշխանութիւններն ամենուրեք իրանց ձեռքն են առել հաց պատրաստելը. բաց է թողնվում միայն 2½ ֆունտ իւրաքանչիւր 3 մարդու:

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Ստացված տեղեկութիւնների համաձայն Գերմանիայում շարունակ պատրաստութիւններ են տեսնվում ձմեռային արշաւանքի համար: Պատրաստվում են մեծ քանակութեամբ տաք իրեր:

Տեղեկութիւններ կան, որ շարունակվում են երկպառակութիւններ գերմանացիների և աւստրիացիների միջև, ըստ երևոյթին զօրքերի գերագոյն հրամանատարութեան հարցերում տիրող տարաձայնութիւնների հողի վրա:

Չէզոք մամուլը մատնանշում է, որ արևմտեան ռազմադաշտում գերման զօրքերը գործ են ածում ալկօհոլ անհաշիւ, որպիսի հանգամանքը, լրագիրների ասելով, լրջօրէն գցել էր կռւի ընդունակութիւնը գերման զօրքերի մի քանի մասերում Մառնի վրայի ճակատամարտի ժամանակ:

Երկրագործութեան ու հողային բարեկարգութեան վարչութիւնը արդէն պատրաստել է առաջին հերթին անհրաժեշտ հացահատիկ ու ալիւր զօրքի համար: Ժամանակաւորապէս գները կանգնեցված է:

Բրիտանական ծովային մինիստրը մանրամասն կերպով տեղեկացնում է, թէ ինչպիսի պայմաններում անգլիացիք մասնակցեցին Անտվերպէնի պաշտպանութեան գործում:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան ծախսերի նախահաշիւը 1915 թ. կազմում է 146.652,371 րուբլի:

ՏՕԿԻՕ. — «Ջիձի Շիմբուն» լրագիրը գրում է, որ Ճապօնիան պէտք է վճռական ձայն ունենայ գերման գաղութների հարցի լուծման ժամանակ:

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ.— Ֆինանսների մինիստրը Ֆօլկէտինգին ներկայացրեց օրինագիծ 60 միլիօն կռոնի՝ ներքին փոխառութիւնը ռէալիզացիա անելու մասին:

Գերմանական լրագիրները նորից ազգաբնակութեանը կոչ են անում կռիւ մղել լրտեսների դէմ: Լրագիրները պնդում են, թէ իբր ամենուրեք գործում են իբրև լրտեսներ ռուս, անգլիացի և ֆրանսիացի տղամարդիկ:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Օստենդէի մօտ կռիւ է գերմանացիների և անգլիացիների միջև: Ճակատամարտ է սկսվել նաև Գենտի և Տերմոնդի միջև: Անգլիացիներին օգնում են բէլգիացիք:

◆ Անտվերպէնի գրաւումը գերմանացիներից ցաւակցութիւն է առաջ բերում ընդհանուրի մէջ դէպի հերոս բէլգիացիք: Այն կարծիքն է տիրում, որ անգլիացիք ուշացրին իրանց օգնութիւնը, որի պատճառով էլ բերդի յետագայ պաշտպանութիւնը դարձաւ այլ ևս անհնար:

◆ Բէլգիական Ալբերտ թագաւորն անցել է հօլլանդական սահմանը: Նրա ստացած վէրքը թեթև է:

◆ Բուխարեստում երևան հանվեց դաւադրութիւն գերմանասէրների մէջ, որոնք վճռել էին տապալել կառավարութիւնը և պատերազմ յայտարարել Ռուսաստանին և Սերբիային։

◆ Հաղորդում են, որ ռումինական Կարլ Թագաւորը իր բնական մահով չէ մեռել։

◆ Բուդապեշտում կայացել է ունգար և չեխ պառագլուխների գաղտնի խորհրդակցութիւնը, որ վճռել է առաջարկել Ռուսաստանին՝ թողնել Ունգարիային Տրանսիլվանիան, Բոսնան և Ֆիումէն, որի փոխարէն նրանք կը դադարեցնեն կռիւը ռուսների և սերբերի դէմ։

◆ Անտվերպէնը վերցնելու առիթով Բերլինում եկեղեցական զանգերը շարունակ ղօղանջեցնում են, փողոցներում տեղի են ունենում աղմկալի ցոյցեր։

◆ Ռումինական մինիստրների կաբինէտը հրաժարական է տուել։

◆ Կարմիր Խաչի օրը Պետրօգրադում հանգանակվեց 140,000 ռուբլի։

◆ Վիլհէլմ կայսրը հեռագիր է ուղարկել ռումինական նոր Թագաւոր Ֆէրդինանդին, առաջարկելով նրան չէզոք մնալ։

◆ Պարսկաստանի մեծ քաղաքներում Թիւրք էմիսարները շարունակում են գրգռել մահմեդական ազգաբնակութիւնը քրիստոնեաների դէմ։ Թէհրանի և Թաւրիզի պարսկական լրագիրները յորդորում են կառավարութեանը՝ օգտվել եւրոպական պատերազմից և ակտիվ քայլ անել։

◆ Մինիստրների խորհուրդը որոշեց 2 միլիօն ռուբլի յատկացնել Լօձ քաղաքի ազգաբնակութեանը, որ սաստիկ տուժել է պատերազմից։

◆ Հայերից վիրաւորվել են պատերազմի դաշտում պօդպօրուչիկ Խաչատուր Կարապետեան Աղաջանեան, կօրնէտ Սարգիս Ալէքսանդրեան Մելիք-Ազամալեան, որոնք և մնացել են կռւի դաշտում։

◆ Վիէննայի մամուլի ասելով, գահաժառանգը և շտաբի պետ գեն. Գէտցէնդօրֆը ներկայումս գտնվում են Կրակովում։

◆ Բորդօյում վախճանվեց Ֆրանսիացի յայտնի հայրենասէր, պատգամաւոր, գրող և ակադեմիկոս կոմս դէ-Մէնը, որ յայտնի էր նաև իբրև շնորհալի հռետոր։

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

30 սեպտեմբերի

Կ. ՊՈԼԻՍ.—Լրագիրները տպել են պաշտօնական հաղորդագրութիւն, թէ Կ. Պոլիս ներմուծվող կենսական մթերքները յարքունիս չեն գրաւվի։

—

(Լրագիրներից)

◆ Պետրօգրադում հեռագիր է ստացվել, թէ Բ. Դուռը թոյլատրել է Կովկասում և Ղրիմում բնակվող այն քաղաքական էմիգրանտներին, որոնք դէմ են ներկայ ռէժիմին, վերադառնալ Թիւրքիա։

◆ Թիւրք-բուլղարական համաձայնութիւնը Թրակիայի սահմանների նկատմամբ հաստատվել է Թիւրքաց կառավարութիւնից և մտել է իր ուժի մէջ։

◆ Կ. Պօլսում սուր է։ Զգացվում է շաքարի պակասութիւն։

◆ Գերմանացի գնդապետ Գէնը նշանակվել է Սիրիայում Թիւրքական շտաբի պետ։

◆ «Ունիվերսալ» լրագրի աշխատակցին Թիւրք մինիստրներից մէկը հետևեալն է ասել Թիւրք-ռումինական յարաբերութիւնների մասին. «Թիւրքիայի բաղդը սերտ կերպով կապված է Ռումինիայի վիճակի հետ։ Ռումինիայի դիրքի փոփոխութիւնը մեզ հօգս է պատճառում։ Եթէ Ռումինիան ակտիվ կերպով հանդէս գայ եռրեակ համաձայնութեան դէմ, այդ համազօր կը լինի Թիւրքիայի կորստեան։ Եթէ Թիւրք մամուլի մի մասը վերջերս յարձակում գործեց Ռումինիայի վրա, այդ դեռ չէ նշանակում, թէ Թիւրքերը թշնամական վերաբերմունք ունեն դէպի ռումին ժողովուրդը։ Թիւրքերը եւրօպական պատերազմի սկզբում կարծում էին, թէ Ռումինիան, որ միացած է պայմանագրով եռրեակ դաշնակցութեան հետ, ձեռք-ձեռքի տուած կը կռւէ Աւստրիայի և Գերմանիայի հետ միասին։ Մեզ չը զարմացրեց, որ Ռումինիան Իտալիայի նման չէզոքութիւն յայտարարեց, բայց մենք չենք կարող ընդունել, որ Ռումինիան ընդունակ կը լինի քայլ անել իր երէկվայ դաշնակիցների դէմ»։

◆ Թիւրքական «Գեբէն», «Տուրգուտ» և «Բարբարոսա» ռազմանաւերը մտել են Սև ծովը։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՑԻ ԻԴԷՕԼՕԳԻԱՆ

—

Այսպէս էր կոչվում ուղիղ երեք տարի առաջ ռուս անուանի քաղաքագէտ և սենատոր Գ. Ա. Եվրէյնովի լոյս ընծայած մի գրքոյկը, որը իր ժամանակին դիւանագիտական շրջաններում և մայրաքաղաքի մամուլի կողմից լուրջ ուշադրութեան առնըվեց։ Անցել է երեք տարի, բայց երբ մարդ այժմ նորից է կարդում այդ գիրքը, չէ կարողանում իր զարմանքը չը յայտնել հեղինակի այնքան նուրբ և հեռատես քաղաքագիտութեան վերաբերմամբ։ Հիմա, մեր օրերում մենք ականատես ենք լինում ճիշդ այդպիսի քաղաքական խոշոր դէպքերի և բարդութիւնների, ինչ որ դեռ 1911 թւին նախատեսել է Եվրէյնովը։ Ներկայ համաեւրօպական պատերազմի դրդապատճառների լուսաբանութիւնն ընդհանրապէս և մեզ՝ հայերիս համար արևելեան կնճռոտ հարցի մասին նոր դիտողութիւններ և դատողութիւններ լսել մանաւանդ, կարծում եմ, բաւարար խրատներ են տալիս ինձ մեր ընթերցողների համար թարգմանելու այդ շահեկան աշխատութիւնը փոքրիկ կրճատումներով։

I

Ներկայ աշխատութիւնը Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան վերաբերմամբ,—սկսում է իր գիրքը Եվրէյնովը,—արտայայտում է մի հին սլաւօնասէրի իդէօլօգիան, որը դեռ անցեալ դարի եօթանասնական թւականներին գիտակցում էր և քարոզում այն սկզբունքները, ինչ որ ընդհանուր գծերով համապատասխանում է մեր ժամանակի նոր սլաւօնիստների քաղաքական աշխարհահայեացքին։

Մոսկվայի սլաւօնական կօմիտէտի փակումից յետոյ ես հիմնադիրներից մէկը եղայ Օդեսսայում կազմակերպվող սլաւօնական ընկերութեան, որի կանոնադրութիւնը հաստատվեց 1870 թւին. իսկ երբ Մօտիկ Արևելքում ծագեց սլաւօնական շարժումը, որը և պատճառ դարձաւ 1877—78 թւերի պատերազմին, ես նախագահն էի այդ ընկերութեան։

Օդեսսայի ընկերութեան սլաւօնասիրութիւնն այն ժամանակ հեռու էր ամեն տեսակ դաւանական խտրութիւններից. քաղաքի բազմացեղ բնակչութիւնը, ինչպէս և արտասահմանեան սլաւօնները մասնակցութիւն ունէին մեր ընկերութեան մէջ. նոյն իսկ առաջին անգամ նախագահ ընտրվեց մի հարուստ դալմատացի։ Մեր ընկերութիւնը սլաւօնական միութեան համար լայն կերպով բաց էր արել իր դռները, միևնոյն էր եթէ ընկերութեան անդամները ինչ լեզուով էին խօսում և ռուսաց թէ կաթօլիկ եկեղեցին էին գնում։ Մենք համբերատար էինք համաձայն պրաւօսլաւ եկեղեցու ոգուն, որ հեռու է հալածողական միտումներից և օրհնում է իր զաւակներին այլադաւանների հետ ունեցած նոյնիսկ ամենասերտ շաղկապի (ամուսնութեան) ժամանակ։

Մենք չէինք երազում սլաւօնական առանձին կուլտուրայի մասին, որ իբր համահաւասար լինէր արևմտեան քաղաքակրթութեան. ընդհակառակը, մենք սլաւ. ժողովուրդների միութեան գաղափարն համարում էինք սլաւօն ազգայնութեան քաջառողջ ծառին պատուաստելու գալար ճիւղերն այն քաղաքակրթութեան, որը դարաւոր կատարելագործութեամբ փարթամացել էր պետական համայնակեցութեան պայմաններում և արդիւնագործական առաջխաղացութեան շրջաններում։

Բայց դաւանելով այդպիսի սկզբունք, մենք չէինք ուրանում հին սլաւօնոֆիլների ծառայութիւնները։ Մենք հասկանում էինք, որ Խօմեակովի և Ակսակովների սլաւօնասիրութիւնը լոյսի մի շառաւիղ էր Նիկոլայ I-ի թագաւորութեան օրով խաւարով պատած Ռուսաստանում, որ այդ սլաւօնասիրութիւնը իրան նպատակ ընտրելով առաջ բերել Պետրոս Մեծից առաջ եղած համաժողովրդական և հասարակական պետական կարգեր՝ բնական ռեակցիա էր ներկայանում մեզանում տիրապետող գերմանական բիւրօկրատիզմի դէմ, որ նրանց սլաւօնասիրութիւնը խոշոր ծառայութիւն է արել ռուս ինտելիգենցիայի մէջ զարթեցնելով ազգային գիտակցութիւնը։ Դրա հետ և մենք ըմբռնում էինք այն նշանաւոր հանգամանքը, որ սլաւօնոֆիլները կանգնած լինելով ռուս համայնական կեանքի ժողովրդական կազմութեան հողի վրա՝ առաւելութիւն էին տալիս պրաւօսլաւ հաւատի դաւանութեան. մի բան, որին նրանք ուզում էին վերադարձնել ընտրողական ձևը ազատելով օբէր-պրօկուրօրական և կօնսիստօրիական խճճուկ սատանաներից։ Մենք նկատում էինք, սակայն, որ սլաւօնասէրների նացիօնալիզմը այն ժամանակ, 70-ական թւերին, արդէն այդ շրջանակում չէր գոհացնում Ռուսաստանի ոչ պետական և հասարակական կազմութեան և ոչ իսկ իր արտաքին քաղաքականութեան խոշոր խնդիրներին։

Ռուս պետութեան կազմութեան մէջ մըտնում էին բազմաթիւ այլացեղ և այլադաւան ժողովուրդներ, և դրա համար Ռուսաստանի ամբողջութիւնը որպէս պետութեան պահանջում է այնպիսի ներքին պետական կարգեր, որով այդ այլացեղ և այլակրօն ժողովուրդները իրանց ընդունելով Ռուսաստանի օրինահաւասար քաղաքացիներ՝ լինէին ռուսական ազգասէրներ։ Միւս կողմից Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան այն կենսական խնդիրները, որոնց մասին ես քիչ յետոյ պիտի խօսեմ, պահանջում են, որ մենք ազգային և հոգեկան ամենասերտ միութեան մէջ լինենք Աւստրիայի սլաւօն կաթօլիկ ժողովուրդների հետ…

Դեռ 1877 թւի պատերազմից առաջ, ես այցելեցի Պրագա և Զագրէբ և աւստրիական սլաւօնների լուսաւորված շրջանի քաղաքական տրամադրութեանը հիմնովին ծանօթանալու բարեպատեհ պայմաններն ունէի. ահա իմ տպաւորութիւնների եզրակացութիւնը։

Աւստրիական սլաւօնների ինտելիգենցիան ճշմարիտ գաղափար ունէր բոլոր սլաւօն ժողովուրդների համերաշխութեան քաղաքական նշանակութեան վերաբերմամբ. նրանք ընդունում էին այն հզօր ոյժը, որ սլաւօնական այդ գործում կարող է ունենալ Ռուսաստանը. բայց, որ աւելի նշանակալից է, նրանք բարձր էին գնահատում արևմտեան քաղաքակրթութեան նուաճումները և բոլորովին չէին կարողանում հաւատալ առանձնապէս սլաւօնական կուլտուրայի գոյութեանը։ Մանաւանդ Ռուսաստանի պետական և հասարակական կարգերը նրանք գտնում էին չափազանց յետամնաց։ Հասկանալի է ուրեմն, որ աւստրիական սլաւօնների միջև ցեղակից հզօր ռուսական կայսրութեան հետ քաղաքական համերաշխութեան գաղափարը պայծառանում կամ աղօտանում էր մեզ ընդ մէջ, նայելով թէ մեր պետական կեանքում առաջընթա՞ց թէ յետադարձ հոսանքներն էին տիրապետում։ Մինչև իսկ Նիկոլայ I-ի ժամանակակից իրաւագէտ Պատօցկին մի աֆօրիզմ ունի, որ ասում է. «Արևմտեան սլաւօնների շահը պահանջում է մի Աւստրիա ստեղծել, եթէ նոյնիսկ նա գոյութիւն չունենար»։ Իսկ Ալէքսանդր II-ի թագաւորութեան առաջին տարիների ռեֆօրմները աւստրիական սլաւօնների մէջ առաջ բերին գիտակցական բարձր թափ Ռուսաստանի հետ ցեղական հարազատութիւն և քաղաքական համերաշխութիւն ունենալու։ Ինչ վերաբերում է հասարակ ժողովրդին, առաւելապէս գիւղական հասարակութիւններին, նրանց հետ ունեցած խօսակցութեան ժամանակ ես եկայ այն եզրակացութեան, որ նրանց ամենքի սրտում աւանդական գաղափար է թաղնված Ռուսաստանի մասին որպէս հարազատ երկրի։

Օդեսսայի սլաւօնական ընկերութիւնն այդ պայմաններում ռուս սլաւօնասիրութեան վերջնական նպատակն էր համարում այն, ինչ համապատասխանում է մի մեծ ժողովրդի բարոյագիտական պահանջներին և ուրեմն ռուս պետութեան կենսական շահերին. այսինքն՝ ամենայն աջակցութիւն սլաւօններին ազատելու թիւրքերի և գերմանացիների տիրապետութիւնից, միախմբու բազմաց սլաւօն ժողովուրդներին և ն կուլտուրական և քաղաքական համերա թիւնը ցեղակից և զօրեղ աէրութիւն մող ժողովրդի հետ։ Այդ բանում մենք գտնում Ռուսաստանի պատմակ չումը, որ արժանի է նրա մեծութ արտաքին քաղաքականութեան իդէալ նպատակին։

Սլաւօն ժողովուրդների այդ եղբայ շաղկապից մենք հեռու չէինք պահ լեհացիներին։

Մենք գտնում էինք, որ երկու հար ժողովուրդների դարաւոր թշնամ ժամանակ է վերջ տալ, որ ամենատա կան ճշմարտութիւնը և Ռուսաստան ամբողջ սլաւօն աշխարհի առողջամ հերը պահանջում են տալ Լեհաստ նրա ազգագրական սահմաններում և պետութեան կազմի մէջ՝ քաղաքակ ազգային աւտօնոմիա, այնքան լայ նրա հետ միանալը դրացի լեհերի հ լինէր քաղաքական իդէալ*)։

Ռուսաստանի՝ դէպի լեհերն ունեցա տեսակէ վերաբերմունքի մասին սովոր ընդդիմախօսում են, թէ լեհերին ոչ մ տօնոմիա չի գոհացնի. նրանք ձգտում են բականգնել լեհական թագաւորութիւնը հաստանի առաջին բաժանման նախոր սահմաններով, «ծովից ծով»։ Ճիշդ է, լեհ այս ամբոխային հոգեցնորքն ունեն, համաշխարհային քաղաքականութեան խնդիրներ լուծելիս չը պիտի դրան նշ կութիւն տալ, աւելի ևս ի նկատի ու լով ռուս պետութեան՝ և մաս-մաս հպատակ լեհ ժողովրդի ներկայումս գ թիւն ունեցող ոյժերը։

Քաղաքական և ազգային լայն ինքն րութեան պայմաններում այդ հոգեցն (պսիխօզ) ինքն իրան կը վերանայ։

---

*) Յայտնի է, որ,—ասում է հեղինակը,—ռազ տական և տնտեսական նկատումներով Լեհա տիրապետելը Ռուսաստանի համար այնքան ան տու մի բան է, որ Նիկոլայ I կայսրը 1830 թ դափոխութիւնից յետոյ մտածում էր հրաժարվե նից։ Այդ մտքի իրագործումն էլ անցանկալի էր համար, որ բոլորովին անկախ Լեհաստանը կա մեզ թշնամացող պետութեան ազդեցութեան կ խանութեան տակ ընկնէր։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

ՌՈՒՄԻՆԻԱՅՈՒՄ

—

(Պետ. Հեռ. Գործ.)

29—30 սեպտեմբերի

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Մայր տաճարում հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալ Կարլ Թագաւորի յիշատակին։

Պարլամենտում Ֆերդինանդ I Թագաւորը սահմանադրութեանը հաւատարիմ մնալու երդում տուեց ներկայութեամբ միտրօպօլիտի, հոգևորականութեան, Մարիա Թագուհու, գահաժառանգ պրինց Կարլի, պրինց Նիկօլայի, պրինցեսներ՝ Ելիզավէտայի և Մարիամի, մինիստրների և պատգամաւորների։ Յետոյ Թագաւորը արտասանեց հետևեալ ճառը.

«Կոչվելով Աստուծոյ ողորմութեամբ և ժողովրդի կամքով լինել ժառանգող մեր թագաւորութեան մեծն հիմնադրի, որ յանձնեց ինձ իբրև սրբազան ժառանգութիւն մի ամբողջ ժողովրդի հպատակութեան ու սիրոյ զգացմունքներ, առ ժողով ունեցած սիրոյ մէջ ես ոյժ եմ քա որպէսզի առանց տատանվելու ընթ իմ բարձր, սակայն դժուարին պարտ նութիւնը կատարելու ճանապարհով։

«Այն մարդու վեհ օրինակը, որին ամենքս այժմ ողբում ենք իբրև հօր, այն համոզմունքը, թէ սուրբ մշտական քերով հնարաւոր է պահպանել ժողով կենսունակութիւնը, ղեկավարելու են բովանդակ կեանքում իմ պետութիւնը գացնելուն ուղղված իմ ջանքերը։ Այդ տականութեան իրականացումը, որ ես իմ առնում անյողդողդ հաւատարմութ ու սիրով, ինձ համար մեծագոյն պա կը լինի։

«Վարվելով այդպէս, մենք շնորհակա թեան հաւաստիքը կը ձօնենք նրան յիշատակը հանդիսանալու է ամենաթ գին շաղկապ ժողովրդի և մեր տան իր բաղդաւոր թագաւորութեան ըն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԻՒԱՆԴԻ ՎԵՐՋԻՆ ԳԻՇԵՐԸ

(Անցեալի յուշերից)

—

Հեռու իր բազմակարօտ հայրենիքից ու ծնողներից, օտար երկնակամարի տակ և օտար միջավայրում, մահվան անկողնի մէջ պառկած տնքում էր պանդուխտ հիւանդը։

Լրանում էր 32-րդ տարին, երբ նա 11—12 տարեկան հասակում թողել էր իր հայրենի տունը, երբ իր մանկական վերջին մնաս բարևն էր ասել իր ծննդավայրի սիրած դաշտերին ու լեռներին և ձեռք էր առել պանդխտութեան ցուպը՝ «հաց աշխատելու» համար։ Այդ 32 երկար տարիների տարագրական օրերում՝ շատ հիւանդութիւններ էին անցել նրա գլխով, բայց այս անգամ նրա մաշված սիրտը կարծես զգում լինէր, որ այս անգամվայ հիւանդութիւնը՝ իր հոգեվարքի վերջին օրերն են ներկայացնում…

Հ. քաղաքի անկիւնում, մի նեղ խըցիկի մէջ մենակ պառկած հառաչում էր նա։ Նրա գլխավերևի սեղանի վրա դրված լամպն էլ կարծես թէ չէր ուզում լոյս տալ և հետզհետէ մարելու վրա էր գնում… Ո՛չ մի ձայն, ո՛չ մի ծպտուն չէր լսվում նրա մթին բնակարանում։ Մեռելային լռութիւնը խեղդել էր ամեն ինչ… Այդ գերեզմանային հանդարտութեան միջից հազիւ լսվում էր նրա հոգեվարքի հառաչումների ու մրմնջումների ցաւոտ շշուկը… Մահվան սև քօղը փակել էր նրա աչքերը և կապել էր նրա սրտի լարերը… Նրան տանջում էր միմիայն մի ուրուական, որին կարծես թէ նա հոգու աչքերով էր տեսնում։ Դա իր կարօտագին ծնողների և սիրեցեալ հայրենիքի ուրուականն էր, որ մինչև մահվան վերջին րոպէն ևս չէր հեռանում նրա հոգեկան տեսողութիւնից։

— Ա՛խ, մայրի՛կ…—հառաչեց նա, և կարծես թէ ուզում էր նստել, բայց չը կարողանալով՝ նորից գլորվեց անկողնի վրա։

Այո, ծնողներին էր ձայն տալիս նա, որպէսզի իր չարքաշ գլուխը նրանց գրկում դրած՝ հանգիստ սրտով աւանդէր իր հոգին։ Իսկ նրա ծնողները դեռ անդէտ սպասում էին իրանց միակ որդու ճանապարհին և մեծ յոյս ունէին նորից նրան տեսնելու և իրանց ծնողական կարօտը նրանից առնելու…

Բայց ի՜նչ հակապատկեր դրութիւն, ի՜նչ անողոք ճակատագիր… Ծնողները ապագայի փայլուն երազներ էին երազում, իսկ իրանց դժբաղդ զաւակը մի քանի ժամ էլ ունէր իր վերջալոյսի վերջին անզօրոյն րոպէին ու սգալի սև ժամին հասնելու…

— Ա՛խ, մայրի՛կ…,—նորից լսելի եղաւ նրա հառաչման ձայնը։

Ծնողական անդաւաճան սէրն էր դա, որ տանջում էր նրա հոգին ու ջլատում նրա սրտի կապերը։

Գիշերվայ ժամը 2-ը խփեց։

Ամբողջ քաղաքը թմրած էր գիշերային խոր քնի մէջ։ Աղօտափայլ լուսինն էր միայն արթուն, որ լուռ ու մունջ անցնում էր իր սովորական գծով և նրա սենեակի պատուհաններից մէկով ներս էր ձգել իր ճառագայթները։ Աստղերը հանդարտ ու փառահեղ կերպով պսպղում էին երկնակամարի վրա։ Քամին էլ րոպէ առ րոպէ իր տխուր ու մելամաղձոտ մեղեդին էր հնչեցնում։ Ամբողջ բնութիւնը ննջում էր խաղաղ լռութեան մէջ…

Երկար ժամերով նստած նրա մօտ՝ նայում էի նրա տխուր ու ընդհատ շնչառութեանը։ Նրա կրծքից դուրս էին թռչում մահվան հառաչանքների կայծեր և կարատում ու մաշեցնում իմ սիրտը։ Յանկարծ պատում էր ինձ մի անբացատրելի երկիւղ, և ես երևակայում էի, թէ նա վերջացաւ… Բայց նա նորից բարձրացնում էր իր գլուխը և հոգու կիսախուփ աչքերով նայում իմ վրա ու կարծես թէ իր սրտի և հոգու խորքերում մի ինչ-որ բան էր մրմնջում։ Այո, նրա աչքը դեռ բաց էր, նա ուզում էր մի անգամ էլ տեսնել իր կարօտագին ծնողներին ու հայրենիքը…

Անցաւ երկու ժամ ևս, և նրա դրութիւնը րոպէ առ րոպէ վատթարանում էր։ Նրա երեսի գոյնը և աչքերի փայլը հետզհետէ աղօտանում էին… Այդ ճգնաժամային դրութեան մէջ ևս նրա կրծքից միշտ դուրս էր թռչում «Ա՜խ մայրիկ» բացագանչութիւնը և կորչում էր սենեակի մեռելային լռութեան մէջ։

Յանկարծ նրա գունատ և մեռելատիպ ճակատի վրա երևացին սառն քրտինքի բազմաթիւ կայլակներ։ Դա արդէն նրա հոգեվարքի նշանն էր։

Առաւօտեան արշալոյսը դեռ չէր բացվել, դեռ քառորդ ժամ ևս կար մինչև լուսաբացը, երբ վերջին անգամ ուժեղ կերպով նրա կրծքից դուրս թռաւ «ախ» բառը, և ահա ամեն ինչ վերջացած էր…

Նա մեռաւ պանդխտութեան ծոցում՝ տանջված կեանքով՝ կարօտ մնացած իր սիրեցեալ հայրենիքից ու ծնողներից։

Երկրորդ օրը նրա բարձի տակից գտան մի թուղթ, որի վրա գրված էր հետևեալը.

«Հայրենիքիս ու ծնողներիս նուիրական սէրը գերեզմանիս մթին խորքում էլ ինձ համար մի լուսաւոր աստղ է հանդիսանալու…»։

Մ. Գասպարեան

Ռանգուն (Հնդկաստան)

ԵՐԳ ԱՌ ՊՈԼՈՆԻԱ

(Փ. Լամընէ)

—

Քնէ՛, ո՛վ իմ Պօլօնիա, քնէ հանդարտ, հոն՝ զոր քու գերեզմանը կանուանեն, ես գիտեմ որ այդ քու օրրանն է։

Երբ անօգնական, լքուած, մատնուած, վատապարեկ, պատերազմներէ մաշուած, ճակատդ զերծեցաւ, ծունկերդ կթոտեցան, կատաղի ուրախութեամբ մը խայտացին և երկար աղաղակ մը արձակեցին, վայրենի աղաղակ մը, սուր՝ որպէս աղաղակը բորենւոյն, որ սարսուռ կազդէ ուղևորին իր վրանին ներքև։

Քնէ՛, ո՛վ իմ Պօլօնիա, և այլն։

Ան ասպետներն՝ որք իրենց զէն ու զարդերն հագուած կը քնեն հին գերեզմաններու մէջ, պահապան ոգին հոն պառկած էր գետնին վրայ. այս աղիողորմ հողէն բուռ մը նետեցին իր վրայ և ըսին՝ այլևս բնաւ պիտի չարթննայ։

Քնէ՛, ո՛վ իմ Պօլօնիա, և այլն։

Ցիրուցան քու որդիքը փառաւոր հրաշալի պատմուածներով աշխարհը լեցուցին։ Անոնք պատմեցին, թէ ինչպէս յանկարծ քու հարստահարիչներուն շղթան խորտակելով դուն ոտք ելար նման հրեշտակին, զոր Աստուած կուղարկէ իր սուրով զինեալ, պատժելու համար զանոնք՝ որք արդարութիւնը կը ծաղրեն. և բռնաւորներուն սիրտը խռովեցաւ։

Քնէ՛, ո՛վ իմ Պօլօնիա, և այլն։

Յետոյ՝ երբ պատմեցին անոնք այն ամենը, զոր քու աչքերը տեսան փակուելէ առաջ, այսինքն այրամարդոց անհաւատալի քաջութիւնը, տկարագոյն կանանց հերոսական արիութիւն, ծաղկահասակ կոյսերուն սուրբ եռանդը, քահանայից հոգևոր անձնուիրութիւնը, նոյնիսկ փոքրիկ տղոց իրենց մայրերուն բազկէն փախչելը՝ որպէսզի երթային մեռնիլ քեզ համար, սրտայոյզ ժողովուրդներ գլուխնին խոնարհեցուցին և ըսկսան արտասուել։

Քնէ՛, ո՛վ իմ Պօլօնիա, և այլն։

Այնքան զոհողութիւնք, այնքան աշխատութիւնք ապարդիւն պիտի անցնի՞ն. այս նուիրական մարտիրոսները հայրենիքի դաշտերուն մէջ լոկ յաւիտենական ստրկութեան ցանեցի՞ն. այս հայրենիքն առ յաւէտ ա՞յսպէս պիտի լինի, առ որ տակաւին կը դառնան հեռուանց մշուառ աքսորականաց նարկները. քիչ մը խոտով ծածկուած փոս մը պիտի մնայ այդ հայրենիքէն ըսէք ինձ։

Քնէ՛, ո՛վ իմ Պօլօնիա, և այլն։

Վատը սարսափահար՝ խաղխողից ռազմիկները, անոնց ուժեղ ձեռքերն երկաթներով սեղմեց, երկիւղ կրեց ներէն, երկիւղ կրեց նոյնիսկ մանու բէն, և ամայութիւնը լափեց զանոնք սուրէն ճողոպրեր էին, մինչդեռ միայնութեան մէջ կը խռովէին կամ խառն ի խուռն երկրես անդունդը կը տէին զանոնք, տաճարներու պատերը կործանէին արիւնաներկ սեղաններու

Քնէ՛, ո՛վ իմ Պօլօնիա, և այլն։

Ի՞նչ կը լսէք այս անտառներուն հովերուն տխուր մրմունջը։ Այս դ րուն վրայէն ինչո՞ր կանցնին. ուղևոր չունինք, որք տեղ մը կը փնտռեն հանգ համար։ Ամենամա՞յս է. ոչ, խաչ մը կը նեմ, դարձած դէպի արևելք. նա ցոյց տայ այն կէտն, ուսկից արեգակը կը և բերկրուան դէմ քաղցր ու խորհր ձայներ կը մրմնջէ։

Քնէ՛, ո՛վ իմ Պօլօնիա, և այլն։

Նայեցէք. իր թմբուկ, բայց հան ճակատին վրայ վստահութիւն մը կայ կուրծքէ, իր շրթանց վրայ թեթև պիտ մը կայ։ Ի՞նչ տեսաւ իր քուոյն անոյն երա՞զ մըն էր այն, խաբուսի պատիր։ Ոչ, աստուածային կոյսը, հոգ ուած թագուհին, ինձ է բարձրեալն ձեռքը անոր սրտին վրայ դրաւ և մի ապագային քօղը վեր առաւ. այն եսաէն հաւատքը իրեն ցոյց տուաւ տութիւնը։

Քնէ՛, ո՛վ իմ Պօլօնիա, քնէ խաղաղ զոր քու գերեզմանը կանուանեն, ես գ որ այդ քու օրրանն է։

Թարգմ. Մ. Սարաճ

քում, որ իրաւամբ ներկայացնում է մեր պատմութեան պարծանքը, Ռումինիայի առաջին Թագաւորը խոշոր դէպքերի րոպէին միշտ գտնում էր հզօր աջակցութիւն գահի ու ժողովրդի միութեան մէջ։ Ես հաւատացած եմ, որ, ոգևորված միևնոյն բարձր հայրենասիրութեամբ, ռումինները այսուհետև ևս ցոյց կը տան գահին և երկրին միութեան ապացոյց ինչպէս մտածողութեան, այնպէս և գործողութեան մէջ, միութեան, որ հանդիսանում է ազգային առողջ զարգացման միակ գրաւականը։

«Ռումինիան քանիցս ընկել է ծանր փորձութիւնների մէջ, սակայն Ամենաբարձրեալը օրհնել է նրանց աշխատանքը, որոնք իրանց նուիրել են այդ ժողովրդի բարեկեցութեանը, և այժմ չի թողնի կորչել այն ամենը, ինչ ստեղծվել է այդպիսի ջանքերով և դէպի ռումին ազգը տածած իր սիրոյ մէջ կօրհնէ այն անդադրում աշխատանքը, որպիսին ես, իբրև հաւատարիմ ռումին և իբրև Թագաւոր, հաստատ վճռել եմ նուիրել իմ սիրելի երկրին»։

Այս ճառը, որ յաճախակի ընդհատւում էր բուռն ծափահարութեամբ, առաջ բերեց աղմկալի ովացիա ի պատիւ Թագաւորի և Մարիա Թագուհու։ Միացեալ պալատների նախագահը իր ճառում գովաբանեց հանգուցեալ Թագաւորի մատուցած ծառայութիւնները և հաւատացրեց նոր Թագաւորին, որ օրէնսդրական պալատները հաւատարմութեան զգացմունքներ են տածում դէպի նա։

Ապա տաճարում կատարվեց մաղթանք։

Թագաւորը և Թագուհին վերադարձան պալատ ցնծագին ողջունվելով ճանապարհին կանգնած զօրքերից և փողոցները լցրած ժողովրդի անհամար բազմութիւնից։

ԲՈՒԽԱՐԷՍՏ. — Կէսօրվայ ժամը 3-ին հանդէսով փոխադրվեց Կարլ Թագաւորի աճիւնը Բուխարէստ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

30 սեպտեմբերի

ՈՒՐՄԻԱ. — Հրացանաձգութիւնը շարունակվում է։ Սեպտ. 28-ի մեծ կորուստների տպաւորութեան տակ քիւրդերը ցրվեցին և մտադիր էին վերադառնալ իրանց տները, բայց Թիւրքիայից չէյխ Աբդուլլահի և նրա մի քանի հարիւր զինված քիւրդերի գալուստը փոխեց այդ վճիռը։ Ընդամենը Ուրմիայի մօտ կենտրոնացել են մօտ 1000 քիւրդ։ Ուրմիայից 10 վերստ հեռաւորութեան վրա՝ Բալօվ գիւղում, որի ազգաբնակութիւնը սիւննիներ են, գտնվել են մեծ քանակութեամբ հրացան ու փամփուշտ։ Բալօվը ագիտացիայի գլխաւոր բոյնն է։

ՄՈՍԿՎԱ. — Քաղաքագլուխ ընտրվեց Պետական Դումայի անդամ Չէլնոկովը 76 ձայնով ընդդէմ 69-ի։ Բրիանսկին ստացաւ 70 սպիտակ 76 սև դէմ։ Ձայնաւորներից երկուսը բողոք ներկայացրին Չէլնոկովի ընտրութեան դէմ, պատճառաբանելով նրանով, որ Չէլնոկովը Պետական Դումայի անդամ է, իսկ նրա հարազատ եղբայրը՝ քաղաքային վարչութեան անդամ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՈՒՄԱ

(Սեպտ. 29-ի նիստը)

Այդ օրվայ հերթական նիստը կայացաւ նշանակված ժամին, քաղաքագլուխ Ա. Ի. Խատիսեանի նախագահութեամբ։

Ներկայ էին 45-ից աւելի իրաւասուներ և վարչութեան ամբողջ կազմը։

Քարտուղարը կարդաց նախորդ նիստի արձանագրութիւնը, որն ընդունվեց դումայի կողմից առանց նկատողութիւնների և ուղղումների։

Այնուհետև սկսվեցին հարցապնդումները։

Ի միջի այլոց հարց յարուցվեց վրաց թատրոնի շէնքը այրվելու մասին։

Հարցապնդման հեղինակ իրաւասու Գոտուա, խօսելով հրդեհի շուրջը, նկատեց, որ քաղաքը չունի կարգին հրդեհաշէջ խումբ. նա սակաւաթիւ է, իսկ եղած գործիքներն ու պարագաները անբաւարար։ Նա ուզում է իմանալ, թէ քաղաքային վարչութիւնը ինչ միջոցներ է մտադիր ձեռք առնել հրդեհաշէջ խումբը իր կոչման բարձրութեան վրա կանգնեցնելու համար։

Գոտուան այն համոզման է, որ թատրոնը կարելի էր փրկել կրակից, եթէ լինէին բաւարար չափով հրդեհաշէջներ, գործիքներ ու պարագաներ։

Քաղաքագլուխը, բացատրելով որ հրդեհաշէջ խումբը գտնվում է ոստիկանական իշխանութեան ներքոյ, աւելացնում է, որ քաղաքային վարչութիւնը պատասխանատու չէ այդ բանում։ Այնուամենայնիւ յատուկ մի մարմին վարչութեան հետ միասին կատարում է քննութիւն, և նրա արդիւնքը կը զեկուցվի դումային։

Ապա նախագահը անցնում է օրակարգի խնդիրներին։

Հաղորդում է դումային, որ Բարձրագոյն Թոյլտուութիւն է ստացված Կովկասի փոխարքայ գեներալ-ադիւտանտ կոմս Ի. Ի. Վօրօնցով-Դաշկովին Թիֆլիս քաղաքի պատուաւոր քաղաքացու կոչումն ընդունելու մասին։

Որոշվում է իրաւասուների յատուկ պատգամաւորութեամբ ներկայանալ կոմսին և յայտնել, որ նա մուծվում է քաղաքային յատուկ գրքի մէջ իբրև Թիֆլիսի պատուաւոր քաղաքացի։

Պատուաւոր կոչումն տալը երկու ձև ունի. մէկը՝ որ տալիս են դիպլոմ, իսկ միւսը՝ որ մուծում են յատուկ գրքի մէջ։ Ներկայ դէպքում ընտրված է երկրորդ ձևը։

Այդպիսով Թիֆլիս քաղաքի պատուաւոր քաղաքացիների թիւը երեք է. 1) բարոն Նիկոլայ, որ մեռած է, 2) Լ. Կ. Զուբալով և 3) կոմս Ի. Ի. Վօրօնցով-Դաշկով։

Վարչութեան անդամ Ժուրուլի զեկուցանում է Թիֆլիս քաղաքի 1914 թ. նախահաշւի հաստատման մասին։

Ինչպէս յայտնի է, քաղաքները օրէնքով ազատվում են ոստիկանական ծախքերի կէս մասից։ Ներկայումս մինիստրութիւնը դժուարանում է իրագործել այդ արտօնութիւնը, ուստի քաղաքային գործերի նահանգական ատեանը եկամտի նախահաշիւը հաստատելիս մտցրել է ոստիկանական ծախքերի ամբողջ գումարը լիովին։

Որովհետև 1914 թւի փետրվարի օրինագծի համաձայն յատկապէս Թիֆլիս քաղաքի վերաբերմամբ կայ որոշակի ցուցմունք, որ նա պիտի տայ ոստիկանական ծախքերի համար 108,000 ր. միայն, ուստի քաղ. վարչութիւնը խնդրում է դումայից լիազօրութիւն՝ միջնորդութիւն յարուցանելու եկամտի նախահաշւից աւելորդ պահանջվող ոստիկանական գումարը դուրս ձգելու համար։

Դուման լիազօրում է։

Քաղաքագլուխ Ալ. Ի. Խատիսեանը տեղեկացնում է Դումային, որ ինքը պատիւ է ունեցել ներկայանալու Նորին Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչին, աղ ու հաց ներկայացնելու և գալուստը շնորհաւորելու դումայի իրաւասուների ու քաղաքի ազգաբնակութեան կողմից։

Որովհետև Նորին Բարձրութիւնը ցանկութիւն է յայտնել տեսնելու իրաւասուներին, ուստի հրաւիրում է իրաւասուներին ամսիս 30-ի առաւօտեան ժամը 10-ին լինել պալատում։

Երկար վիճաբանութեան առիթ է տալիս Մելիք-Ազարեանցի նորակառոյց տան և պօստ-հեռագրական շրջանին պատկանող շինութեան արանքից Օլգինսկայա փողոցը և Կարուսնի նրբափողոցը իրար հետ միացնելու մասին տրվող զեկուցումը։

Վարչութիւնը, նկատի առնելով որ յատուկ գումար չունի իր տրամադրութեան ներքոյ և որ դրա համար կը հարկաւորվի 12,000 րուբլի ծախսել քաղաքի սուղ միջոցներից, գերադասում է վերաշինել եղած շէնքը և արդիւնագործել։

Իրաւասուներ Նեպրինցէվ և Անտօնօվ առարկում են վարչութեան առաջարկի դէմ, նկատելով որ դա շեղումն է դումայի որոշումից, քանի որ սկզբունքով որոշված է փողոց անց կացնել և նոյնիսկ այդ առիթով համաձայնութիւն կայ Մելիք-Ազարեանցի հետ։ Երկու ճառախօսներն էլ պնդում են փողոց բանալու անհրաժեշտութեան վրա։

Նրանց միանում է Ա. Բաբօվ սկզբունքային, սանիտարական ու բարեկեցութեան տեսակէտներով։

Իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկը մի քանի փաստական ուղղումներով հերքում է իրաւասու Անտօնովի ասածները համաձայնութեան մասին։

Քաղաքագլուխը նկատում է, որ պէտք է պարզել հարցը. քաղաքի շահերը պահանջո՞ւմ են ծախսել այժմ 12,000 ր.՝ այդտեղից փողոց անցկացնելու համար, թէ ոչ։ Եթէ այո, ուրեմն պէտք է յատկացնել այդ գումարը և մտցնել 1915 թւի նախահաշւի մէջ։

Ի. Մ. Դօլուխանեան, նկատի առնելով որ համաձայնութիւն չի կայացել Մելիք-Ազարեանի հետ, յայտնում է, որ խնդիրը մնում է իր նախնական դրութեան մէջ. պէտք է շինել մեր միջոցներով, թէ չը շինել։ Նախ որոշենք՝ ո՞ւմն է հարկաւոր այդ փողոցը։ Միայն պօստի վարչութեանը։ Հարցը պարզ է. չը կայ անհրաժեշտութիւն այդ փողոցի, մանաւանդ այժմ, երբ մեզ ասում են՝ «որքան կարելի է՝ կրճատեցէք ծախքերը» պատերազմի պատճառով։ Առաջարկում է հարցը չը վճռել, այլ տալ տեխնիքական-ֆինանսական մասնաժողովին։

Որոշվում է յանձնել տեխնիքական մասնաժողովին այդ հարցի պարզումը։

Քաղաքագլուխը յայտնում է դումային, որ նոր հեռագիր է ստացել Գ. Ի. Տէր-Մարգարեանից։ Վերջինս իր տունը դնում է քաղաքի տրամադրութեան տակ այն պայմանով, որ պահվի այնտեղ 10 վիրաւոր, և ամսական յատկացնում է 500 րուբլի նրանց պահպանութեան համար։

Նիստը փակվեց ժամը 11-ից անց։

ԱՆԵՋՐ ԾԱՆԾԱՂԱՄՏՈՒԹԻՒՆ*)

(«Արևի» երկդիմի դիրքաւորութիւնը)

II

Եւրոպական ներկայ պատերազմը բարդ և կնճռոտ պատճառներ ունի, սակայն նա ծագեց որպէս ազգային ինքնորոշման պահանջից բղխած մի մրրիկ։ Սերբիական ազգային հաւաքման գաղափարը բախվեց աւստրիական կենտրոնաձիգ-ատոմիստական*) պետականութեան սկզբունքի հետ և այդ հանգամանքը վառեց ներկայ հրդեհը։ Չի կարելի ասել, որ ազգերը Աւստրիայում իրաւազուրկ են։ Ընդհակառակը, ոչ մի տեղ այնպիսի ազգային ազատութիւններ չը կան, ինչպէս Աւստրիայում։ Այդ երկիրը համարեա թէ ազգերի պետութիւն է, սակայն, ինչպէս մեր ժողովուրդն է ասում, ցորենի հացը եղջիւրներ ունի և նա շատ շուտ է զօռացնում նրանց, որոնք կերակրվում են դրանով։ Այսպէս թէ այնպէս՝ ներկայ պատերազմը հրահրել է, որ հրապարակ բերվեն չը լուծված ազգային հարցերը, և դա այնքան է ակներև եղել, որ ռուսական բանակի Գլխաւոր Հրամանատարը յատուկ կոչերով ազգային ազատութիւններ է խոստացել լեհերին և աւստրիական միացած ազգերին։ Վերջիններիս նկատմամբ հրապարակված կոչը պիտի հասկանալ այն իմաստով, որ Ռուսաստանը պիտի անվթար պահպանէ աւստրիական ազգերի ազատութիւնները, քանի որ, ինչպէս ասացինք, նրանք այնքան էլ չեն ճնշված իրանց ազգային դէմքը արտայայտելու բնագաւառում։

Ի հարկէ, գործող բանակի Գլխաւոր Հրամանատարի կոչերը պիտի նկատել ոչ միայն ըստ աւուր պատշաճի հրապարակ հանած խոստումներ, այլ և որոշ սկզբունքների խոստովանութիւն, որ ազգերը չը պիտի բռնադատվեն ուրանալու իրանց դէմքը, որ յատուկ հաստատութիւններ պիտի ստեղծվեն նրանց անարգել զարգացման համար։ Եւ այն, ինչ խոստացվում է լեհերին, չի կարող անգիտացվել Ռուսաստանի միացած ժողովուրդների համար. միայն՝ նայած տեղին ու պայմաններին՝ այդ խոստումը իր իրագործման մէջ կարող է ստանալ ուրիշ ձև ու կերպարանք։

Հայերը, որպէս ազգութիւն, որոշ ակնկալութիւններ ունեն կապված ներկայ պատերազմի հետ։ Այդ ակնկալութիւնները համարեա բացառապէս կապված են արտասահմանեան հայութեան ճակատագրի հետ։ Թիւրքահայի դատն է ասպարէզ բերվում և լռութեամբ ընդունվում, որ ռուսահայերը պատճառներ չունեն դժգոհելու իրանց վիճակից։ Այսօր էլ որևէ ջանք չէ արվում ստանալու մեր երախտաւոր վերածնիչ Ս. Նազարեանի 60 տարի առաջ արտայայտած կարծիքը, թէ «Ռուսաստանը կարող է ամենևին աներկիւղ լինել հայոց ազգի դէպի նա անդրժելի հաւատարմութեան մասին, և դրա ապացոյցը միշտ և հանապազ տեսել է նա։ Թուրքերը որպէս մահմեդականներ, իրանց յարաբերութեան մէջ դէպի Ռուսաստան, թէ շատ և թէ փոքր միշտ կասկածելի են. վրացիք, թէպէտ և կարող չէին պահպանել իրանց ազատ դրութիւնը պարսիկների երեսից, այնու ամենայնիւ տրտնջում են և անգոհ են Ռուսաստանից, որ սա բաւականացել չէ մի պաշտպանողական իշխանութեամբ, այլ ստորադրել է նրանց իր ստոյգ հրամանակալութեան տակ։ Բայց հայերը ճշմարտապէս և իրաւացի շնորհակալ են Ռուսաստանից, որ ազատել է նրանց մի անտանելի, անարգական ստրկութիւնից, և բացել է նրանց առջև մի նոր քաղաքական կեանքի ասպարէզ» («Հիւսիսափայլ», 1859, յունվար, էջ 11—12)։ Ս. Նազարեանի կարծիքը Թուրքերի և վրացիների նկատմամբ անարդար չէ եղել իր ժամանակին, բայց նա այսօր չէ համապատասխանում ճշմարտութեան, որովհետև բազմաթիւ շահեր այդ ազգերին հաշտեցրել են ռուսական տիրապետութեան հետ։ Անխախտ է մնում նրա միւս կարծիքը, որ մենք ռուսական զէնքի օժտով դուրս եկանք «անարգ ստրկութիւնից» և մտակոխեցինք «նոր քաղաքական կեանքի ասպարէզ»։ Դրա համար հայերը այնքան շնորհապարտ և երախտահատոյց եղան Ռուսաստանին, որ մի ամբողջ դար իրանց հեռու պահեցին այս երկրի քաղաքական կեանքից և այսօր էլ շարունակում են ընթանալ նախնիքների տրորած ապօլիտիք շաւղով։

Ստ. Նազարեանցը ամբողջ մի հասարակական տիրող հոսանքի կարապետը հանդիսացաւ։ Հայկական ռուսասիրութիւնը այնպիսի չափեր ընդունեց, որ հայ պահպանողական բանակը**) այլ ևս յոյս չէր տածում, որ ռուսահայերը կարող են պահպանել իրանց ազգային ինքնուրոյնութիւնը, և հայութեան ապագան, որպէս ազգի, կապում էին միմիայն Թիւրքահայերի հետ։ Այդպէս էին տրամաբանում տասնեակ տարիներ առաջ նոյնպէս Թիւրքահայ վարիչ շրջանները։ Վերջին ռուս-թիւրքական պատերազմը սթափեցրեց ռուսահայերին, և մեր քաղաքական միտքը ընդգրկեց հայ պահպանողական բանակի այն սկզբունքը, թէ հայութեան համար նոր վերածնունդ բացառապէս պիտի սպասել Թիւրքիայի երկնակամարի տակ։ Այդ նպատակով սկսված շարժումը ռուսահայ դեմօկրատիական խաւերի գործը դարձաւ։ Այստեղ դեմօկրատիան իր յեղափոխական գործելակերպը շաղկապեց պահպանողական մտքի հետ, իսկ պահպանողականութիւնը հրաժարվեց դեմօկրատիայի գործելակերպից։ Հայութեան վերածնունդը պահպանողականների աչքում պիտի կատարվէր խաղաղ կուլտուրական զարգացման ուղիով։

Հայ պահպանողականները մի բան գիտէին, որին մինչև վերջը անգիտակ մնացին հայ յեղափոխականները. դա այն է, որ հայերը, որպէս առևտրա-արդիւնաբերական խաւ և որպէս պաշտօնէութիւն, չափազանց անհրաժեշտ տարր էին Թիւրքիայի համար։ Պահպանողականները, գուցէ ոչ անիրաւացի, սպասում էին և հաւատում, որ հայերի գործակցութեամբ թիւրք պետականութիւնը կարող կը լինի դուրս գալ իր ասիական կեղևից և ընդգրկել ժամանակակից թէ միջուկ և թէ տարազ. Թիւրքիան նրանց համար պատկերանում էր որպէս ապագայ Աւստրիա։

Սակայն հայերի յեղափոխական շարժումը և նրանց ապաւինումը օտար հայանպաստ միջամտութեան՝ հիմնայատակ խախտեց պահպանողականների ծրագիրը։ Տասնեակ տարիներով մերժվեց հայ և թիւրք մերձեցման գաղափարը և նորից այդ իմաստով խօսք բացվեց 1908 թ. յուլիսեան յեղափոխութիւնից յետոյ։ Թէ ինչ հետևանքների յանգեց հայ և թիւրք մերձեցման գործը, դա այսօր յայտնի է ամենքին և գաղտնիք չէ, որ ազգային անջրպետը այսօր աւելի քան ահռելի կերպարանք է ընդունել Թիւրքիայում։

Թիւրքահայերը կամ նրանց անունից գործողներն ու խօսողները միշտ կրկնել են, որ իրանք չեն կամենում անջատվել Թիւրքիայից, որ Հայաստանի բարենորոգումը պետական բարիք է ընդհանրապէս, և այդ հանգամանքը թիւրք լրջամիտ և պետականօրէն դատող խաւերի մէջ առաջացրել է որոշ բարեացակամութիւն դէպի հայկական հարցը։ Սակայն դուրս է գալիս, որ հայերը իրանց հաւաստիացումների մէջ անկեղծ չեն եղել, որ Թիւրքիան, որպէս պետական միաւոր, չէ կարող հանդուրժելի հովանաւոր նկատվել հայերի համար։ Այս գաղափարը զարգացնում է ռուսահայ «Արևը», որը իրան արհեստ է դարձրել աւելի շատ երջանկացնել Թիւրքահայերին։ Ահա ինչ է գրում այդ թերթը իր վերջին համարներում «Հայերը և պատերազմը» առաջնորդողի մէջ (№ № 138 և 139). «Այդտե՞ղ էլ (պետութիւնների ապագայ վեհաժողովում։ Դ. Ա.) ասենք, թէ ողորմելի, աղճատված րէֆօրմները բաւական են մեզ։ Այդտե՞ղ էլ հաւատացնենք աշխարհին, թէ թիւրք կառավարութեան «հովանաւորութիւնը» հարկաւոր է մեզ, թէ չենք կարող այդ հովանուց դուրս ապրել, կամ թէ փափագում ենք ուրիշ տիրապետութիւն... Սա կը լինի ո՛չ թէ քաղաքական իմաստութիւն, այլ քաղաքական ամենադաժան անմտութիւն։ Սա կը լինի քաղաքական ողբալի անզօրութիւն, որից յետոյ չենք կարող ուղիղ նայել յետնորդ սերունդի ճակատին...»։ Եւ ապա՝ «Կրկին րէֆօրմ, կրկին թիւրք հովանաւորութիւն, կամ այս անգամ էլ ուրիշ տիրապետութիւն, որ չը գիտենք ինչ ապագայ կարող է բերել մեզ և կամ ինչ պատմութիւն կը ստեղծէ մեզ համար։ Հայ ժողովուրդը ձանձրացել է արդէն այդ բոլոր պատմութիւններից։ Այն ժամանակ, երբ բոլոր ժողովուրդներն էլ բարձրաձայն դնում են իրանց պահանջները պետութիւնների մեծ ժողովի առջև, մենք չենք կարող լռել, չենք կարող կեղծել, թէ բարիք ենք ստացել օտարի տիրապետութիւնից»... «Արևը» իր այս խորհրդածութիւններին աւելացնում է, որ «մեր ասելիքը հասկանում են ամենքն էլ» և դա ճիշդ դիտողութիւն է։ Ճիշդ դիտողութիւն է նաև այն, որ «չենք կարող կեղծել, թէ բարիք ենք ստացել օտարի տիրապետութիւնից», սակայն անճարը կերել է բանջարը։ Մի՞թէ օտար տիրապետութիւնը մենք մեր կամքով ենք ցանկացել կամ թէ հնարաւորութիւն ենք ունեցել ազատվել այդ տիրապետութիւնից։ Եւ, վերջապէս, այսօր հնարաւորութիւն ունե՞նք թօթափելու այդ տիրապետութիւնը։ Ամենամեծ քաղաքական իմաստութիւնը կայանում է նրա մէջ, որ մի ժողովրդի ղեկավարներ այդ ժողովրդին ասեն այն, ինչ որ կայ։ Պատրանքները անհետանում են, փաստերը մնում։ «Արևը» խուսափում է փաստական կացութիւնից և պատրանքների ամրոցներ է կառուցանում հայ միամիտ ընթերցողի առաջ։ Այդ հանգամանքը կարող է հայերի մէջ առաջացնել անիրագործելի ցնորքներ, որոնց կարող են հետևել անխելացի արարքներ։ Պէտք է խուսափել գրգռումների քաղաքականութիւնից, որ կարող է արհաւիրքների դուռը բանալ հայերի համար։

Երկու տարի առաջ, երբ բալկանեան պատերազմի շնորհիւ կրկին ասպարէզ քաշվեց հայկական հարցը, անվերջ խորհրդածութիւններ եղան հայկական ինքնօրէնութեան մասին։ Բոլորն էլ տեսան, որ հայերի թւական չափը և նրանց ցրուածութիւնը հնարաւորութիւն չեն ընձեռում մտածելու հարցի այդ կարգի լուծման մասին։ Ամենուրեք դրուատվում էին հայերի չափաւոր պահանջները և դա համապատասխանում էր Թիւրքահայ դատի պատմական անցեալին։ Այսօր այն մարդիկ, որ իրանց համար մենաշնորհ են արել խօսել Թիւրքահայերի անունից, հրապարակով յայտարարում են, որ իրանք չեն կամենում այլևս կեղծել, որ Թիւրքահայերի համար ոչ րէֆօրմ են կամենում, ոչ Թիւրքական հովանաւորութիւն և ոչ էլ մի նոր օտար տիրապետութիւն։ Այս դատողութիւնը իր արտաքին ձևով արմատական է և կարող է շատ դուրեկան թւալ այս կամ այն ռոմանտիքին, սակայն նա միևնոյն ժամանակ մի նոր ապացոյց է «Արևի» քաղաքական ծանծաղամտութեան։ Բայց նա և վտանգաւոր է հայ դատի համար, ուստի և պիտի մերժվի բոլոր խելացի հայերի կողմից։

Հայերը, եթէ շարունակում են դաւանել այն սկզբունքը, թէ նրանք, որպէս ազգութիւն կարող են գոյութիւն ունենալ միմիայն թիւրք պետականութեան ծոցում, ապա և պիտի մտահոգեն համաձայնակեցութեան ձևեր մշակել այդ պետութեան հետ. իսկ եթէ դեռ ևս անսասան է Ս. Նազարեանցի տեսակէտը, մնում է, որ նրանք ըստ այնմ էլ բովանդակութիւն դնեն իրանց գործելակերպի մէջ։ Մի այլ ուղի, որ իրագործելի լինէր, մենք չը գիտենք, իսկ ով տեղեակ է դրան, թող պատրանքներ չը յարուցանէ անփաստ շաղակրատութեամբ, այլ պարզ ու համոզիչ խօսքով վերացնէ տիրող տարտամութիւնը։

Բագու. Դ. Անանուն

---

*) Տես «Մշակ» № 211։

*) «Կենտրոնաձիգ-ատոմիստական» որակումը պատկանում է Ռուդոլֆ Շպրինգէրին, որը աւստրիացի լինելով՝ յայտնի է որպէս ազգային հարցի կարող տեսաբան։ Ըստ Շպրինգէրի՝ պետութիւնը իր և ազգերի յարաբերութիւնը կարող է յարդարել երկու եղանակով. առաջինը՝ ճանաչել, որ ազգերը որոշ հաւաքական միաւոր են կազմում. դա օրգանական եղանակն է. երկրորդը՝ անգիտանալ ազգային պատկանելիութիւնը և ճանաչել անհատին. դա էլ կենտրոնաձիգ ատոմիստական եղանակն է։ Շպրինգէրը, ինչպէս և նրա ընկեր Օտտօ Բաուէրը, դաւանում են այն սկզբունքը, որ Աւստրիան պիտի իր պետականութիւնից վտարէ ատոմիստական կարգերի մնացորդը և հաստատ ոտքով կանգնէ օրգանական սկզբունքի լիակատար կիրառման վրա։ Այստեղ նրանք պաշտպանում են ազգային-կուլտուրական աւտօնօմիայի ծրագիրը։

**) «Հայ պահպանողական բանակ» ասելով, մենք հասկանում ենք այն հասարակական հոսանքը, որ նախորդ դարի 60-ական թւականներին ծայր տուաւ Պետրոս Շանշեանի պէս առաքինի մարդու ազդեցութեան շնորհիւ և յետագայում ունեցաւ իր ներկայացուցիչները յանձինս Պետրոս Սիմէօնեանցի և «Փորձի» ու «Արձագանքի» դրական խմբերի։ 50-ական թւականների ինքնագոհ հայամոլութեան ներկայացուցիչներ Աւ. Արաբատեանը, Ե. Չէրքէզեանը, Ս. Ք. Մանդինեանը և այլք չեն կարող համարվել մեր պահպանողականութեան նախահայրերը, քանի որ նրանք մոլեգնած յետադիմականներ էին։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ջրի կարիքը մեզանում

Կուսապատ, 13 սեպտ.

Ջրի կարիքը մեզանում օրվայ հացի պէս պահանջ է դարձել։ Մեր գիւղախումբը բաղկացած է չորս շէնից—բուն Կուսապատ, Դամալու, Հորաթաղ և Մարգակերտ—ունի մօտ 800 տան բնակիչ։ Հող ունի ընդամենը 11,000 դեսեատին, որից մօտ 4,000 դ. ջրովի է, իսկ 3000 դեսեատին անջրդի. միացածը՝ անտառ և արօտատեղ։ Խաղողի այգի կայ մօտ 300 դեսեատին, որ շատ չնչին եկամուտ է տալիս՝ ջրի պակասութեան պատճառով, որովհետև կան այնպիսի այգիներ, որոնք ահա 7—8 տարի է՝ դեռ չեն ջրվել։

Ջրովի հողի մի աննշան մասն է ջրվում, որովհետև ջուր չը կայ (ջրվում է մօտ 150 դեսեատին), այն էլ պէտք է խաղողի այգիները թողնենք առանց ջրի։

Մեր ջուրը, որ հազիւ մի ջրաղաց է բանեցնում, գոյանում է աղբիւրներից և մի քանի քահրիզներից, որը շատ աննշան է մեր ջրովի հողի դէմ։ Ջրի պակասութեան պատճառով մեր գիւղացիք թողնում են իրանց հողը և օրերով ճանապարհ գնում ու թուրք կամ հայ կալւածատէրերի հողերը վարում և մեծ-մեծ տոկոսներ տալիս բէգին։ Եթէ բոլոր ծախսը մանրամասն հաշւենք մեր պանդուխտներն իրանց վաստակած դրամի հազիւ մի երրորդականը կամ չորրորդականը բերում են տուն։

Մեզնում եղել է տարի, ինչպէս անցեալ տարի, երբ մարդիկ վարել են մօտ 100 պութ ցորեն, բայց արդիւնք չեն ստացել, իսկ եթէ վարած լինէին բէգական հողում, իրանց տարվայ պաշարը ստացած կը լինէին։

Ջրից օգտվելու համար մի քանի ճանապարհներ ունենք. 1) Թարթառ գետը, 2) քահրիզներ դուրս գցել և 3) սարեր ճեղքով (տունելի միջոցով) ջուր բերել։ Գիւղացիք սիրով և հեշտութեամբ կը համաձայնվեն ջուր հանողի հետ մի քանի պայմաններով, որ ձեռնտու լինի ջուր հանողի համար. օրինակ՝ 1) որոշ տարիներ ընթացքում տալ որոշ % ստացված արդիւնքից. 2) տարեկան մի որոշ գումար փողով տալ, մինչև որ ծախված գումարը մի տոկոսով ստացվի. 3) կամ հաշւել բոլոր ծախսը և նրա տոկոսը, և այդ գումարը բաժանել մի քանի տարիների վրա և ստանալ տարէ-տարի որոշ գումար։ Վերջապէս գիւղացիք ամեն կերպ կը համաձայնվեն ջուր հանողի հետ։ Ցանկալի էր, որ մեր բարերարները, բարեգործական ընկերութիւնները կամ առանձին կապիտալիստներ ուշադրութիւն դարձնէին այս հարցին։

Լուսապաղ

ԳԻՒՂԸ ԱՌԱՋԱԴԻՄՈՒՄ Է

— Կամ մի սել փէյին փոխ տուր կամ փողով ծախիր,—ասում էր մեր գիւղացիներից մէկն ինձ։

— Մերը մենք պէտք է կրենք, ածեն մեր հողը, սիրելիս,—պատասխանեցի։

Այս փոքրիկ զրոյցը առիթ է տալիս ին վերադառնալ 20—30 տարի առաջ, երբ ոստիկանութիւնը հազիւ էր կարողանում գիւղացոց կրել տալ իրանց փէյինները, թափում էին, իբրև անպէտք իր, կամ գետերի մէջ կամ անպէտք տեղեր։

Որքան տուգանքներ էին վճարում փէյինները կրել չը կարողանալու համար, այ արդէն ասել չի լինի։

Եւ այսպէս՝ գիւղացին երկար տարիների ընթացքում մատով համարելի օրինակների նմանվելով վերջ ի վերջոյ համոզվեց, որ փէյինները կրելով՝ նա կրկնակի է վաստակում. Նախ՝ պարարտացնում է հողը, այգին, երկրորդ՝ մաքրում է գիւղը։

Շատ էլ հեշտ չէ գիւղացուն կապել քարոզներով, խրատներով օգուտ բերող նորութիւնների հետ. բայց, եթէ կարողացար օրինակներով համոզել նրան, նա քեզնից էլ կաշխատի առաջ գնալ զանազան խորահնար ձևերով բեղմնաւորելով իրան օգուտ տուող նորաձևութիւնները։

Եւ այսպէս՝ գիւղացին շարունակ կրում է փէյինը իր վարելահողը. նա նոյն իսկ փողով է գնում։

Սա ուրախալի երևոյթ է։ Երկրագործութիւնը թէև նախնի եղանակներով է շարունակվում, թէև գութաններն են միայն փոխվել, իսկ չութը, տափանը, սերմերը, հունձը, կալ կալսելը նոյնն են, բայց նա փորձով գիտէ, որ փէյնած հողը մէկին 50 է տալիս. այդ պատճառով էլ՝ նա ոչ ժամանակը, ոչ աշխատանքը և ոչ փողն է խնայում նոյն իսկ հեռու հողերը փէյնելու։

Շատ անգամ ենք հրաւիրել մասնագէտ գիւղատնտեսների ուշադրութիւնը այս կէտի վրա, և եթէ բաղդը ժպտացել, և մի գիւղատնտես է եկել ու փորձեր արել, գիւղացին ընդառաջ է գնացել, որովհետև նա տեսնում է, որ այժմ կեանքի ապրուստի պայմանները փոխվել են. այլ ևս հինը ձեռք չի տալիս։

Մեծ հաճոյքով արձանագրում եմ, որ հայ գիւղացին, գոնէ մեր գաւառացին, դպրոցին, իր երեխին ուսում տալուն այնքան է հետամուտ, որքան իր օրական ապրուստին։

Մեր գաւառի բոլոր մեծ գիւղերը (մինչև 100 տուն) ունեն դպրոցներ։

Մ. Ք. Եղիկեան

Քարվանսարա (Ղազախ)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Նախանցեալ օրը, Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչը մի շարք պատգամաւորութիւնների Թւում ընդունեց և Թուրք պատգամաւորութեանը, որը ամենից առաջ ներկայացաւ հետևեալ կազմով, Բարձրագոյն Դրան շտալմէյստեր Ասլանբէկ Կազանալիպով, խան Տարկովսկի՝ Հիւսիսային Կովկասից, կալուածատէր Ալի-խան՝ Երևանի նահանգից, կալուածատէրեր Իսկանդէր-բէկ Ռուստամբէկով, Ֆարրուխ-բէկ Վէզիրով, Համիդ-բէկ Զիւլգադարով՝ Գանձակի նահանգից, Իսմայիլ-բէկ Սաֆար-Ալիեվ, Իւսուֆ Դադաշեվ և Միրզա Ասադուլաեվ՝ Բագուից։ Ֆարրուխ-բէկ Վէզիրովը դիմեց Մեծ Իշխանին հետևեալ ճառով. «Ձերդ Կայսերական Բարձրութիւն, Անդրկովկասի և Դաղստանի Թուրքերը բարձր պատիւ են արել մեզ՝ ողջունել ձեր գալուստը և իրանց խորին բաղդաւորութիւնը արտայայտել Ձեր կովկասեան Թուրքերի դիվիզիայի պետ նշանակվելու առիթով։ Մեր գնդերը Մեծ Թագաւորի կամքով գործող զօրաբանակի շարքերը հրաւիրելը և այդ գնդերը Իր Օգոստափառ Եղբօր խնամքին յանձնելը՝ ողորմածութեան ամենամեծ գործն է մեզ համար։ Վստահ ենք յայտնել Ձերդ Բարձրութեան, որ Կովկասի բոլոր մուսուլմանները պատրաստ են, որպէս մի մարդ, զոհ բերել իրանց կայքը և կեանքը Թանգագին հայրենիքի բարօրութեան և սիրելի Թագաւորի Սրբազան Գահի համար»։ Ի պատասխան այդ ճառի Նորին Կայսերական Բարձրութիւնը ասաց. «Յայտնեցէք ձեր բոլոր մուսուլմաններին իմ շնորհակալութիւնը։ Ես զգացված եմ և միանգամայն հաւատացած, որ մուսուլմանները կարդարացնեն Իմ նրանց վրա ունեցած վստահութիւնը»։

◆ Տեղական դատական վարչութիւնները միացեալ ժողով գումարելով՝ որոշեցին իրանց հաշւով վիրաւոր զօրականների համար մի հիւանդանոց պահել 50 մահճակալով։ Այդ պատճառով ընտրվել է մի առանձին յանձնաժողով։ Որոշված է հէնց այժմեանից ձեռնարկել հիւանդանոցի կահաւորութեան։ 50 մահճակալից 12-ը տեղական փաստաբանների դասը վերցրել է իր վրա։ Հիւանդանոցը տեղաւորվելու է դատաստանական պալատի սահմանաչափութեան (մեժեվօյ) դեպարտամենտը։

◆ Առաջին առևտրական դպրոցի մանկավարժական խումբը որոշել է ստացած ռոճիկներից պատերազմի բոլոր ժամանակ յատկացնել 2°/₀ վիրաւորների կարիքների համար։

◆ Ռուսաց Բարեգ. Ընկ. վերցրել է պահեստիների 50 երեխայի, նրանց խնամելու համար։

◆ Ժամանակաւոր օրէնքի համաձայն, սպիրտային խմիչք վաճառել Թոյլատրվում է միայն I կարգի հիւրանոցներին։ Իսկ I կարգի են համարվում այն հիւրանոցները և ռեստորանները, որոնք քաղաքին վճարում են 1000 ռ. ոչ պակաս տուրք։ [illegible] Այդ պատճառով վարչութեան անդամը խնդրում է ոստիկանապետին՝ առաջարկել այդ տների պահողներին, որ նրանք մի շաբաթվայ ընթացքում քաղաքին վճարեն 1000 ռ., հակառակ դէպքում արգելել սպիրտային խմիչքների վաճառքը։

◆ Սեպտ. 29-ի երեկոյից սկսած, գիշերը և երէկ ամբողջ օրը անձրև էր տեղում Թիֆլիսում։

◆ Մեզ յայտնում են, որ Նարիմանեանի գործի առիթով, որ ապօրինաբար 29 տարի պահվեց Միքայէլեան հիւանդանոցում խելագարի անուան տակ խնամակալների շնորհիւ, և որ յայտնագործեց երդւ.-հաւ.. Ստեփանեան, դատախազը յանձնել է քննիչին կատարել մանրամասն քննութիւն գործի հանգամանքների վերաբերմամբ։

◆ Կայսեր. Կովկ. Գիւղատն. Ընկ. միջնորդել է փոխարքայի առաջ՝ Թոյլատրել գիւղատնտեսների շրջանային խորհրդակցութիւն հրաւիրել և 600 ռ. նպաստ բաց Թողնել այդ խորհրդակցութեան ծախքերի համար։

◆ Ելեքտրական կայարանի տէրերը դիմել են նահանգապետին, խնդրելով մազութի պուդի գինը իջեցնել 52 կոպէկի։ Բագուի բորսային գները և ճանապարհածախսը հաշւելով՝ մազութի պուդը Թիֆլիսում պէտք է արժենար 48 կոպէկ, մինչդեռ տեղական խոշոր նաւԹավաճառները գները կրկնապատկել են, այսինքն պուդը հիմա ծախում են 72 կոպէկով։

◆ Ծարփուխի ակումբը իր վերջին նիստում որոշել է մնալ այժմեան ամառային շէնքում և շէնքի վերաշինութեան վրա ծախսել 1000 ռ.։

◆ Հոկտեմբերի 10-ից այգեգործական դպրոցին կից բացվում են մրգեղէնից, բանջարեղէնից, մսեղէնից կօնսերվներ պատրաստելու երկշաբաթեայ ձրի դասընթացքներ։ Դասընթացքներում ընդունվելու են 100 հոգուց ոչ աւելի։ Դասընթացքները ղեկավարելու են Պ. Գ. Մելիա և գիւղատնտես Է. Է. Զօմմէր։ Դասընթացքներում պատրաստած բոլոր կօնսերվները տրվելու են Կարմիր Խաչին։

◆ Ինչպէս յայտնում են, շուտով վերսկսվելու է «Գիւղատնտես» շաբաթաթերթի հրատարակութիւնը։

◆ Մինիստրների խորհրդի որոշումով Կարմիր Խաչի ընկ. Թոյլատրվում է բովանդակ կայսրութեան մէջ մի օրով տուփերով հանգանակութիւն անել։ Մտադրութիւն կայ այդպիսի հանգանակութիւն անել և Թիֆլիսում հոկտեմբերի վերջերին։

◆ Այսօրվանից սկսվում են նորակոչ զինւորացուների ընդունելութեան գործողութիւնները։ Առաջին տարիները, ինչպէս յայտնի է, այդ գործողութիւնները կատարվում էին քաղաքային շինութեան մէջ, այժմ կատարվելու են աշխատանքի բօրսայի շէնքում։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Վրաց Գիւղատնտեսական Ընկերութեան վարչութիւնից և աշխատակցութիւնից կազմված է մի խառն կօմիտէտ, որի նպատակն է օգնութիւն հասցնել գիւղացի պահեստիների ընտանիքներին։ Իշխան Պ. Ի. Թումանիշվիլին Ծխեթայում գտնվող իր տունը հիւանդանոցի համար առանց վճարի դրել է կօմիտէտի տրամադրութեան տակ։ Կօմիտէտը շնորհակալութեամբ ընդունելով այդ առաջարկը՝ որոշել է այնտեղ հիմնել վրաց հիւանդանոց 50 մահճակալով, որից 20 մահճակալի ծախքը արդէն իրանց վրա են վերցրել մասնաւոր անձինք։

◆ Սագարէջօ գիւղում կազմվել է մի միութիւն, որը օգնութիւն է հասցնելու Սագարէջօ և շրջակայ գիւղերից զէնքի կոչված պահեստիների ընտանիքներին։ Միութեան անդամները շրջելով գիւղերը հաւաքում են դրամ և այլ նիւթեր կարօտ ընտանիքների կարիքը լրացնելու։

◆ Գօրու շրջանում գոյութիւն ունեցող մրգաբոյծների միութիւնը, որ գործում է Վրաց Գիւղատնտ. Ընկ. վարչութեան ղեկավարութեամբ, որոշել է Թիֆլիսում Պուշկինեան և Վօկզալն. փողոցներում հիմնել մրգի երկու խանութ պահեստով։ Այս քանի օրը ստացվելու է Գօրու շրջանի անդամներից 10,000 պուդ ընտիր տեսակի խնձոր և այլ մրգեր Թիֆլիսում վաճառելու։

◆ Գօրու գաւառի Լամիսգանա գիւղացի իշխ. Մարիամ և Ալէքսանդր Օրբէլիանիները, ի նկատի առնելով այն տխուր հանգամանքը, որ գիւղում բժիշկ չը կայ և երեխաների մէջ տարածված արիւնախառն լուծ հիւանդութիւնը անթիւ զոհեր է տանում, հրաւիրել են Թիֆլիսից բժիշկ Մաղալաշվիլուն, որը գալով գիւղ ընդունել է 80-ից աւելի հիւանդների, որից յետոյ պակասել է զոհերի Թիւը։ Բժիշկը, խօսելով բժշկութեան անհրաժեշտութեան մասին, գիւղացիներին խորհուրդ է տուել հրաւիրել գոնէ գիւղական ֆելդշեր, խոստանալով իր կողմից աջակցել, որպէսզի դեղերը տրվեն տէրութեան հաշւով։

◆ Թիօնէթի գաւ. Դէվէնաաթխեվի գիւղացի Ա. Խախուտաշվիլին երկու սեռից կազմված 30 հոգի բարեկամներին 2 սայլերի վրա նստեցրած իր որդու նշանադրութեան համար գիշերով ճանապարհվում է մի ուրիշ գիւղ։ Սակայն հեղեղային մութ գիշերով անընդհատ անձրևներից յորդացած Իօրի գետը անցնելիս սայլերը շուռ են գալիս, և կատաղի ալիքներին զոհ են գնում 20 հոգի։ Խախուտաշվիլիին հարեան-բարեկամները ոչ մի կերպ չեն կարողանում համոզել, որ խաւար գիշերով ճանապարհ չընկնի, որին և հետևել է այդ անլուր դժբաղդութիւնը։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հայկական ներկայացում

Ամսիս 29-ին բացվեց հայկական ներկայացումների սեզօնը, և բացվեց, ինչ ասել կուզի, Լ. Շանթի «Հին Աստուածներով»։ Որքան էլ աղքատիկ լինի մեր ինքնուրոյն րեպերտուարը, յամենայն դէպս այնչափ էլ ողորմելի չէ, որպէս զի Թատրոնը հարկադրված լինի այս սեզօնն էլ սկսել «Հին Աստուածներով»։ Լաւ է, անգուգական է, տաղանդաւոր է,—խօսք չը կայ,—սակայն ամեն բան իր չափ ու սահմանն է ունենում։ Հարկաւոր չէ այդ սահմանն անցնել, այլապէս կարելի է ընկնել Կրիլովի Դեմիանի օրը։

Անցնենք ներկայացմանը։

Երիտասարդ աբեղայի դերում հանդէս եկաւ Իս. Ալիխանեանը, որի դերակատարման մասին նախանցեալ սեզօնում շատ եմ լսել, սակայն ինքս առիթ չեմ ունեցել տեսնելու։ Ալիխանեանը որոշ չափով արդարացնում է իր ունեցած համբաւը։ Աւելի աջողված է դերի առաջին մասը. դերասանը սկզբից և եթ վերցնում է դերին համապատասխանող տոն և առաջին տեսարաններում միանգամայն պահպանում է այդ տոնը։ Աբեղայի մէջ կատարվող հոգեկան պայքարի դրամատիզմը արտայայտելու համար Ալիխանեանը կարողանում է գտնել հարազատ ներկեր, հարկաւոր ելևէջներ։ Դերակատարումը սահուն է, առանց աչքի ընկնող անհարթութիւնների։ Դերի այդ առաջին մասի վերաբերմամբ միայն մի նկատողութիւն կարելի է անել. հինգերորդ տեսարանում (միգանուշների, ճգնաւորի և Սեդայի տեսարանում) Ալիխանեանի աբեղան չափազանց պասսիվ է. մօմենտներ կան, երբ Ալիխանեանը զերօյի է հաւասարեցնում իր ներկայութիւնը բեմի վրա և տալիս է այսպէս կոչված «մեռեալ պաուզաներ»։ Դա սխալ է, քանի որ Թէ միգանուշները, Թէ ճգնաւորը և Թէ Սեդան՝ իր, աբեղայի հոգու սիմբոլացրած մասնիկներն են։ Այստեղ որոշ չափով մեղաւոր է և ռեժիսորը. այս տեսա- [illegible] լանում է։ Չէ որ այն վայրկեանից, երբ աբեղան, ինչպէս ինքն է ասում, «երկրպագեց հին աստուածներին», նա և կերպարանափոխվում է ամբողջովին։ Այս վայրկեանից՝ հեռու Թուլութիւն, հեռու տատանումներ և կասկածներ,—աբեղան հերոս է դարձել, հերոս բառիս բուն նշանակութեամբ. Նա մի հարուածով կտրում է հանգոյցը և նետվում դէպի կեանք, դէպի «ծովը»։ Ալիխանեանը բոլորովին հակառակն է անում. Նա աւելի ևս ուժեղացնում է աբեղայի հիւանդոտութիւնը, և վերջին տեսարանում հերոսական Թափի փոխարէն, մենք հանդիսատես ենք կատարեալ հիստերիկայի։ Ստացվում է անհեթեթութիւն։ Սակայն գուցէ այդպէս է ստացվում իր, Ալիխանեանի կամքի հակառակ. մեզ Թւում է, որ դերասանը այս դէպքում իր բեմական ձիրքի չափազանց սահմանափակ դիապազօնի զոհն է։

Վանահօր նոր դերակատար պ. Սեւումեանը միանգամայն բաւարարեց մեզ։ Գուցէ աւելորդ են համեմատութիւնները, սակայն պէտք է նկատենք, որ մեր տեսած վանահայրերից պ. Սեւումեանը լաւագոյնն է. ի հարկէ պարոնի դերակատարումը հեռու է իդէալից, բայց և այնպէս Սեւումեանը կարողանում է տալ մի շարք ուշագրաւ մօմենտներ։ Դերասանը միանգամայն պահպանում է իր դերի ստիլը. բացի մի երկու վրիպումներից, ոչ մի անհարազատ արտայայտութիւն, ոչ մի կեղծ դրութիւն. իսկ այդ բանից խուսափելը վանահօր դերում այնքան էլ դիւրին բան չէ. չէ որ այս դերում բազմաթիւ մօմենտներ կան, երբ դերասանը շատ հեշտ կարող է շեղվել տոնից, ինքն էլ այդ չը նկատելով։ Սեւումեանի հասկացած վանահայրը միանգամայն համապատասխանում է և մեր ըմբռնումին, և, Թւում է մեզ, եթէ Սեւումեանը աւելի ևս «խորացնի» իր ըմբռնումը, եթէ չը զլանայ կրկին աշխատանք Թափելու, նա արդարև կարող է շատ լաւ խաղալ այդ դերը։ Մանաւանդ ուշադրութիւն դարձնելու է վերջին տեսարանի վրա։ Մենք գնահատում ենք այն պարզութիւնը, որ մտցնում է դերասանը իր մենախօսութիւնների մէջ, սակայն [illegible] բոխը. դա մի մարդ է, որ մարգարէական ձիրքով է օժտուած։ Մի խօսքով՝ մի շարժումով նա իր ետևից կարող է ամբոխներ տանել. և եթէ վանականները վերջին տեսարանում չեն հետևում իրանց վանահօրը, այդ բանում մեղաւոր է Լևոն Շանթը (որին այդ հարկաւոր էր պիէսի կօլլիզիան ստեղծելու համար), և ոչ Թէ վանահայրը։ Մինչդեռ Սեւումեանի վանահայրը յիշեալ տեսարանում քարոզիչ է, և միմիայն քարոզիչ։

Իշխանուհու դերը մեծ վարպետութեամբ կատարեց տ. Մայսուրեանը։ Դերասանուհին [illegible] օգտագործել է իր ստանձնած դերի բոլոր տուեալները։ Ո՛րպիսի ազնուութիւն, ո՛րպիսի անկեղծութիւն։ Հարազատ, չափազանց հարազատ ներկերով արտայայտեց դերասանուհին դժբաղդ իշխանուհու հոգեկան տառապանքը։ Ամբողջ դերակատարութեան ընթացքում ոչ մի ճղատարկ կէտ. ընդհակառակը, սկզբից մինչև վերջ այդ դերակատարութիւնը պարուրված էր իսկական, անկեղծ դրամատիզմով։

Սեդայի դերում հանդէս եկաւ երիտասարդ դերասանուհի օր. Ժամէն։ Այսքանը կարող ենք ասել, որ օրիորդը անպայման օժտված է բեմական ձիրքով, և եթէ լաւ ղեկավարներ ունենայ, օգտակար ույժ կարող է լինել մեր Թատրոնի համար։ Իսկ ինչ վերաբերում է երկուշաբթի օրվայ ներկայացման, Թող ների մեզ օրիորդը,— այդ երեկոյ Սեդան բացակայում էր։

Առաջվայ պէս անգուգական է Մանուէլեանը կոյր վանականի դերում։ Դերասանի խելօք, մտածված խաղը երկար ժամանակ չէ ջնջվելու հանդիսականի յիշողութիւնից։

Միւս դերակատարները անտանելի են։ Ի միջի այլոց, որտեղից է հաւաքել վարչութիւնը երկրորդական դերասանների այդ տարօրինակ կոյտը (խօսքս, ի հարկէ, բոլորի մասին չէ, այլ մեծամասնութեան)։

Բեմադրութիւնը... Աւելի լաւ է լռենք. մանաւանդ որ այս տարվայ ռեժիսօրը պատասխանատու չէ իր նախորդի մեղքերի համար։ Եւ նոյն իսկ աւելորդ էին այն մի քանի կարկատանները, որ մտցրել էր Սեւումեանը անցեալ տարվայ ռեժիսօրի բեմադրութեան մէջ։

Լևոն Քալանթար

Արքունական Թատրոն

Երկուշաբթի, սեպտ. 29-ին, Արքունական Թատրոնում «Ժիդովկա»-ի ներկայացումը անցաւ անգոյն շնորհիւ անսամբլի համեմատական Թուլութեան։

Կենտրօնական դերերում հանդէս եկան Միխայլով (Եղիազար), տ. Իվօնի (Ռախիլ), Սեմէօնով (պրինց Լէօպոլդ) և այլք։

Միխայլօվը ունի անպայման մշակված ձայն, որ աւելի ախորժալուր է միջին ռեգիստրում։ Բայց վերին նոտաները լսվում են մի տեսակ ճնշված, սեղմ։ Եղիազարի դերը, բացի այդ, պահանջում է խաղ այս բառի իմաստով, որն այնքան էլ չաջողվեց արտիստին, Թէև կան տուեալներ նրա մէջ՝ վերացնելու գուցէ չփորձութիւնից առաջ եկող Թերութիւնները։

Ռախիլի աւելի նուրբ հոգեբանական դերը կատարող տ. Իվօնին, որին նոյնպէս առաջին անգամ լսեցինք, մեզ վրա Թողեց նպաստաւոր տպաւորութիւն իր ձայնի գեղեցիկ տեմբրով ու բեմական արտաքինով։ Խաղը ընդհանրապէս բաւարար էր, միայն Ռախիլի դերը պահանջում է աւելի զգացմունք ու ճկունութիւն շարժումների մէջ։ Չենք վարանում մատնանշել, որ տ. Իվօնին առաջիկայում իր աչքի ընկնող տեղն է գրաւելու ներկայ օպերային խմբում։

Բոլորովին անհամապատասխան Լէօպոլդ էր Սեմէօնովը, որի ձայնական կատարումը և խաղը շատ Թոյլ էին։ Տեղ-տեղ ասես ձայնը հնչում էր միջակ յստակութեամբ ու դերասանը ույժ էր գործ դնում մտնել իր դերի մէջ, բայց այդ կորչում էր ընդհանուր անաջող խաղի մէջ։ Օպէրային վարչութիւնը խուսափելու է պրինցի նման դերերում տակաւին աչքի չընկած արտիստներին հանդէս բերելուց։

Խօրը և օրկէստրը նոյնպէս բաւարար չէին։ Դիրիժեօր Տրուֆֆին ուշացնում է տեմպը և օրկէստրը տանում է ուժեղ կերպով, որը և խլացնում է արտիստների երգը։ Իբրև փորձված դիրիժեօր՝ աւելին պէտք է սպասել Տրուֆֆիից։

Մնացած դերակատարների Թւից յիշենք մեզ ծանօթ Շվէցին, որ հոյակապօրէն տարաւ Կարդինալի դերը։

Բեմադրութիւնը աջող էր։

Ժողովուրդ այնքան էլ չը կար։ Ն.

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Քաղաքական ներկայ աննպաստ պայմանների պատճառով Ուրմիայի հայոց ծխ. փակված դպրոցի ու.

Ուսուցիչն ու ուսուցչուհին

(ամուսիններ) պաշտօն են որոնում ծխական ուսումնարաններում կամ այլ համապատասխան տեղերում՝ Թէկուզ առանձին-առանձին։ Հարցնել «Մշակի» խմբագրատանը։

911. 3—1

ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՄ

աշակերտներ ու աշակերտուհիներ հայոց միջնակարգ դպրոցների ստորին դասարանների համար. (Ներսիսեան, Յովնանեան և Գայեանեան՝ մինչև 4-րդ դասարան)։ Տեղեկանալ «Մշակի» գրասենեակի կառավարչից։

(հ. կ.) 904. 3—2

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ
ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆ-ԱԽԱԳԵԱՆԻ

Բէբուտովսկայա փող. № 38, տ. Մաղաքեանի

Ընդունվում են երկու սեռի երեխաներ՝ սկսած 6 տարեկանից, բոլոր միջնակարգ դպրոցների համար պատրաստելու։

(կ.) 910. 2—1

Հաշուապահական Կուրսեր Գ. Կ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆԻ

(ա.օ) Նիկօլայէվսկայա փող. 36. 863. 25—18

Առևտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայէլեան պր. 24/4. Տելեֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։

Գործնական զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լոնդոնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են րէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական Թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական Թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղում), արագագրութիւն. բ.) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Սղագրութիւն. 3) Դակտիլօգրաֆիա ([illegible]) և 4) Առևտր. Թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և զատ-զատ։ Ունկնդիրների Թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների Թիւը սահմանափակված է։ Պարապմունքները սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշւապահներ, օգնականներ և առևտ. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 334 ունկնդիր, որոնցից 67 հոգի իգական սեռից)։

Կուրսերի հիմնադիր՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ

(ա. օ.) 720. 0—43

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)

կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։

Ընդունվում են տպագրական պատուէրներ հետևեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, Թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, աբխազերէն և լեռնականների բարբառով։ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշգրտօրէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։

Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կատարել [illegible]

ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԻՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԳՆԵՐՈՎ։

Տելեֆօն № 67.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный